Կանանց նկատմամբ թվային բռնությանը EDVAW հարթակի արձագանքման յոթ մեխանիզմները

” Կանանց նկատմամբ խտրականության և բռնության դեմ պայքարի անկախ փորձագիտական մեխանիզմների հարթակի (EDVAW) վերաբերյալ տեղեկատվական ձեռնարկ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Կանանց նկատմամբ թվային բռնությանը EDVAW հարթակի արձագանքման յոթ մեխանիզմները

Կանանց նկատմամբ խտրականության և բռնության դեմ պայքարի անկախ փորձագիտական մեխանիզմների հարթակի (այսուհետ՝ EDVAW հարթակ) 2022 թվականի նոյեմբերի 17-ի տասնչորսերորդ հանդիպման ժամանակ ընդունված տեղեկատվական ձեռնարկ

Սույն ձեռնարկում արտահայտված կարծիքները հեղինակների պատասխանատվությունն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Ձեռնարկի հատվածների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է
(բացառությամբ կոմերցիոն նպատակների), քանի դեռ պահպան-վում է
տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում
համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկատվություն
կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին՝ տեքստի բնույթի,
համատեքստի կամ բովանդակության առումով: Սկզբնաղբյուրը միշտ պետք է
հիշատակվի հետևյալ կերպ՝ «© Եվրոպայի խորհուրդ, հրապարակ-ման տարի»:

Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/ թարգմանության
հետ կապված բոլոր այլ հարցումները պետք է ուղղվեն
Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության վարչությանը
(F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int).

Այս փաստաթղթի հետ կապված մնացած բոլոր
նամակագրությունը պետք է հասցեագրվի
Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության
գլխավոր վարչության
Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի բաժնին:

Շապիկի ձևավորումը և դասավորությունը՝ Փաստաթղթերի և
հրապարակումների արտադրության վարչություն (DPDP),
Եվրոպայի խորհուրդ

DPDP-ի խմբագրական բաժինը չի սրբագրել այս հրատարակման մեջ հնարավոր
տպագրական և քերականական սխալները
© Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2022թ.
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

Բովանդակություն

Հապավումներ **6**
Երախտիքի խոսք **7**
Ներածություն **8**

I. Կանանց նկատմամբ թվային բռնության բնույթը, տարածվածությունը և հետևանքները **10**
Ա. Ի՞նչ է կանանց նկատմամբ թվային բռնությունը 10
Բ. Որքանո՞վ է տարածված կանանց նկատմամբ թվային բռնությունը 12
Գ. Որո՞նք են կանանց նկատմամբ թվային բռնության հետևանքները 13

II. EDVAW հարթակի մեխանիզմները և կանանց նկատմամբ թվային բռնությունը **15**
Ա. Միավորված ազգերի կազմակերպության Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW) 15
Բ. Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող (ՄԱԿ-ի հատուկ զեկուցող) 16
Գ. Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբ (ՄԱԿ-ի աշխատանքային խումբ) 18
Դ. Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող 19
Ե. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խումբ (GREVIO) 20
Զ. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման մասին միջամերիկյան կոնվենցիայի իրականացման հսկիչ մեխանիզմը (MESECVI) 21
Է. Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի Կանանց իրավունքների մասին զեկուցող (IACHR զեկուցող) 23

III. Կանանց նկատմամբ թվային բռնության հիմնական թեմաներն ու մոտեցումները EDVAW հարթակում **24**
Ա. Կանանց նկատմամբ թվային բռնությունը որպես անցանց բռնության շարունակություն (կոնտինուում) 24
Բ. Կանանց նկատմամբ թվային բռնության ինտեսեկցիոնալ կողմը 24
Գ. Կանանց նկատմամբ թվային բռնությունը կանխելու անհրաժեշտությունը 25
D. Կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնության քրեականացումը 26
Ե. Համացանցային հարթակների կարևորությունը կանանց նկատմամբ թվային բռնության կանխարգելման և սահմանափակման գործում 28

IV. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի EDVAW հարթակի մեխանիզմների կիրարկման լավագույն փորձը **30**

Ա. Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեականացում 30
Բ. Թվային բռնությունը որպես ընտանեկան բռնության տեսակ ճանաչումը 30
Գ. Թվային բռնության ենթարկված անձանց համար արդարադատության և աջակցության հասանելիությունը 31
Դ. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ կրթությունը և իրազեկումը 32
Ե. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը 33
Զ. Համացանցային հարթակները, այդ թվում՝ սոցիալական մեդիա ընկերությունները, պատասխանատվության ենթարկելը 34
Է. Կանանց նկատմամբ թվային բռնությանը հակազդելու բազմագերատեսչական մոտեցումը 35

V. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարում EDVAW հարթակի մեխանիզմների կողմից բացահայտված մարտահրավերները 36

Ա. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ ընդհանուր տերմինաբանության բացակայությունը 36
Բ. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալների սակավությունը 36
Գ. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի վերաբերյալ ուսուցման բացերը 37
Դ. Սահմանափակ իրավական պատասխանները 37
Ե. Թվային բռնության ենթարկված կանանց համար մասնագիտական աջակցության ծառայությունների սակավությունը 37

VI. Հետագա քայլեր. EDVAW հարթակի շրջանակներում փոխգործակցության ամրապնդումը կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքելիս 39

Ա. Կանանց նկատմամբ թվային բռնության և կանանց հասարակական և քաղաքական մասնակցության միջև փոխկապակցվածության ճանաչումը 39
Բ. Համացանցում կանանց իրավունքների դեմ ուղղված խոսքի տարածմանն արձագանքումը 40
Գ. Ընտանեկան բռնության և դաժան վերաբերմունքի թվային հարթության խորքային ուսումնասիրությունը 40
Դ. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի կարևորությունը 40
Ե. Մարդու իրավունքների այլ ոլորտների և մեխանիզմների, մասնավորապես՝ կիբերհանցագործության և բիզնեսի ոլորտում, մարդու իրավունքների միջև փոխգործակցության հնարավորությունները 41
Զ. Համագործակցություն մասնավոր հատվածի հետ՝ առցանց վնասները կանխելու և մեղմելու համար 42

Է. Թվային բռնության ինտերսեկցիոնալ բնույթի և մասնագիտական աջակցության անհրաժեշտության կարևորումը 42
Ը. Կանանց նկատմամբ թվային բռնության նոր մարտահրավերների կանխատեսումը 43

Օգտագործված գրականության ցանկ.....44

Հապավումներ

ԱԲ – Արհեստական բանականություն

CEDAW – Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե

EDVAW – Կանանց նկատմամբ խտրականության և բռնության դեմ պայքարի անկախ փորձագիտական մեխանիզմներ

GREVIO – Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խումբ

IACHR – Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողով

ՏՀՏ – տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ

MESECVI – Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման միջամերիկյան կոնվենցիայի իրականացման հսկիչ մեխանիզմ

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ԱՊԿ – Ամերիկյան պետությունների կազմակերպություն

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱ ԿԳՄԿ – Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպություն

Երախտիքի խոսք

«Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության հաղթահարումը EDVAW հարթակի յոթ մեխանիզմների միջոցով» վերտառությամբ այս փաստաթուղթն ընդունվել է EDVAW հարթակի կողմից 2022 թվականի նոյեմբերի 17-ին Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խմբի (GREVIO) նախագահությամբ կայացած 14-րդ առցանց հանդիպման ժամանակ: EDVAW հարթակում ընդգրկված են կանանց իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները, որոնց թվում են կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW), Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը (GREVIO), Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի կանանց իրավունքների զեկուցողը, Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը և Բելեմ դը Պարայի կոնվենցիայի իրականացման հսկիչ մեխանիզմի փորձագետների կոմիտեն (MESECVI): Այս ձեռնարկի բովանդակությունը հիմնված է նախապատրաստական աշխատանքի վրա, որը կատարվել է Դուրհամի համալսարանի իրավունքի պրոֆեսոր Քլեր ՄաքԳլինի և Բրյուսելի Վրիյե համալսարանի գիտությունների թեկնածու Կարլոտա Ռիգոտիի կողմից՝ Ստամբուլյան կոնվենցիայի մոնիթորինգի մեխանիզմի Եվրոպայի խորհրդի քարտուղարության աջակցությամբ:

Ներածություն

Կանանց նկատմամբ խտրականության և բռնության դեմ պայքարի անկախ փորձագիտական մեխանիզմների հարթակը (այսուհետ՝ EDVAW հարթակ) գործարկվել է Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի նախաձեռնությամբ 2018թ. մարտին: Այն ընդգրկում է ՄԱԿ-ի և տարածաշրջանի յոթ անկախ փորձագիտական մեխանիզմներ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի և կանանց իրավունքների վերաբերյալ, որոնք գործում են միջազգային և տարածաշրջանային մակարդակներում[1]: EDVAW հարթակը միտված է մեխանիզմների միջև ինստիտուցիոնալ համագործակցության ամրապնդմանը, նպատակ ունենալով համատեղ գործողություններ ձեռնարկել՝ ներդաշնակեցնելու և բարելավելու կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ գործող միջազգային իրավական և քաղաքականության կառուցակարգերի իրականացումը:

Թեև կանանց նկատմամբ բռնության բնույթը, տարածվածությունը և ազդեցությունը մինչ այդ արդեն իսկ զգալի էին, Covid-19 համաճարակը հանգեցրեց դրա տագնապալի աճին՝ հատկապես առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ոլորտում (ՄԱԿ–կանայք, 2021a), որը չի ճանաչում ազգային սահմաններ և պահանջում է գլոբալ արձագանք: 2022 թվականի հունիսին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հիսուներորդ նստաշրջանում տեղի ունեցած իր 13-րդ հանդիպմանը, որը նախագահում էր GREVIO-ի նախագահը, EDVAW հարթակը թեմատիկ քննարկում անցկացրեց կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ: Այնուհետև EDVAW հարթակը հայտարարություն տարածեց՝ առաջարկելով հետագա համատեղ գործողություններ այս կապակցությամբ, ներկայացնելով առաջին տեղեկատվական ձեռնարկը պատրաստելու իր հանձնառությունը, որտեղ նկարագրված են այն ուղիները, որոնցով կանանց իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները պայքարում են կանանց նկատմամբ թվային բռնության դեմ (EDVAW հարթակ, 2022թ.): Ակնկալվում է, որ այս նախաձեռնությունը կավելացնի փոխգործակցության ներուժը՝ ընդհանուր պատկերացում ստեղծելով կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ իրենց մոտեցումների մասին և խթանելով հետագա երկխոսությունն ու համագործակցությունը EDVAW հարթակի անդամների միջև:

Այս առաջին ձեռնարկը նպատակ ունի անդրադառնալու կանանց նկատմամբ թվային բռնությանը՝ իր անդամների մանդատների շրջանակներում: Այն բաղկացած է վեց բաժիններից: Նախ՝ ներկայացվում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բնույթի, տարածվածության և ազդեցության ընդհանուր պատկերը, ինչպես նաև այս ոլորտում օգտագործվող տերմինաբանությունը: Այնուհետև ներկայացվում է կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ EDVAW հարթակի մեխանիզմների կողմից ընդունված մոտեցումների համառոտագիրը: Հաջորդիվ քննարկվում են կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ առանցքային թեմաները, որոնք նախանշվել են EDVAW-ի անդամների աշխատանքի ընթացքում: Այնուհետև ներկայացվում են կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի լավագույն փորձը և մի շարք մարտահրավերներ, որոնք արձանագրվել

[1] EDVAW հարթակը կազմված է կանանց իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմներից, որոնց թվում են կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների գծով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, ինչպես նաև ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW), Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը (GREVIO), Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի՝ կանանց իրավունքների զեկուցողը, Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող և Բելեմ դը Պարայի կոնվենցիայի իրականացման մեխանիզմի փորձագետների կոմիտեն (MESECVI):

են EDVAW մեխանիզմների շնորհիվ: Եվ վերջում առաջարկվում են EDVAW հարթակի կողմից ձեռնարկվելիք ընդհանուր գործողություններ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանն ամբողջ աշխարհում սրվող միտումներին արձագանքելու համար:

I. Կանանց նկատմամբ թվային բռնության բնույթը, տարածվածությունը և հետևանքները

Այս բաժնում ներկայացված է թվային տիրույթում կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրի համառոտ ակնարկը՝ ներառյալ բռնության ձևերը, տարածվածությունը և դրա բացասական հետևանքները կանանց կյանքի և, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Այս բաժնի նպատակն է խորությամբ հասկանալ բռնության համատեքստը, ընդգծելով տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում դրան արձագանքելու կարևորությունը:

Ա. Ի՞նչ է կանանց նկատմամբ թվային բռնությունը

Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը, ներառյալ թվային բռնությունը, պետք է դիտարկել գենդերային խտրականության շրջանակներում: Կանանց նկատմամբ բռնությունը ոչ թե առանձին հիմնախնդիր է, այլ կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության ամենադաժան դրսևորումը, որին արձագանքելու համար, նախ և առաջ, պետք է անդրադառնալ բռնության արմատական պատճառներին՝ գենդերային խտրականությանը, որը հիմնված է կանանց մասին կարծրատիպերի, ինչպես նաև տղամարդկանց և տղաների նկատմամբ կանանց և աղջիկների ստորադասման երևույթի վրա: CEDAW-ի 5-րդ հոդվածի համաձայն, տարածաշրջանային համապատասխան գործիքների օգնությամբ մասնակից պետությունները պարտավորվում են պայքարել խտրականության նման ձևերի դեմ և վերացնել կանանց նկատմամբ թվային բռնության պատճառները:

Կանանց նկատմամբ թվային բռնությունը կարող է ներառել կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության ցանկացած գործողություն, որը կատարվել, օժանդակվել կամ սրվել է մասամբ կամ ամբողջությամբ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառման արդյունքում, այդ թվում՝ բջջային հեռախոսների և սմարթֆոնների, համացանցի, սոցիալական մեդիա հարթակների կամ էլ. փոստի, աշխարհագրական դիրքին հետևող սարքերի, անօդաչու սարքերի և համացանցին չմիացված ձայնագրող սարքերի և արհեստական բանականության (ԱԲ) միջոցով, և միտված է կնոջ դեմ, քանի որ նա կին է, կամ անհամաչափ է ազդում կանանց վրա:

Վերոնշյալից բխում են առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության չորս հիմնական տեսակները կամ խմբերը. առաջին՝ սեռական բնույթի ոտնձգությունները, բռնությունը կամ չարաշահումը, որն *իրականացվել է* տեխնոլոգիաների և տեխնոլոգիական սարքերի կիրառմամբ, օրինակ՝ զուգընկերոջ կողմից լրտեսող ծրագրերի և հետևող այլ սարքերի միջոցով իրականացված բռնությունը. երկրորդ՝ բռնություն, որը *տեղի է ունենում* և *սաստկանում է* առցանց, օրինակ՝ առանց անձի համաձայնության նրա սեռական բնույթի պատկերների տարածումը, երրորդ՝ տեխնոլոգիան *առաջացրել է* բռնության նոր տեսակ, ինչպիսին է դիփֆեյք պոռնոգրաֆիան[2] և անձի թվային «ես»-ի նկատմամբ բռնությունը վիրտուալ աշխարհում, և չորրորդ՝ երբ առցանց միջավայրն օգտագործվում է բռնությունը և դաժան վերաբերմունքը *հնարավոր դարձնելու* նպատակով, օրինակ՝ սոցիալական մեդիան կանանց և աղջիկների նկատմամբ տարբեր տեսակի սեռական բռնության հիմնական հարթակ է:

[2] Դիփֆեյք պոռնոգրաֆիան (deepfake pornography) պոռնոգրաֆիայի տեսակ է, որը ստեղծվում է արդեն գոյություն ունեցող պոռնոգրաֆիկ բնույթի տեսանյութերի և իրական մարդկանց պատկերների սինթետիկ համադրման միջոցով՝ առանց վերջիններիս համաձայնության: Սովորաբար դիփֆեյք պոռնոգրաֆիայի զոհ են դառնում հայտնի կանայք:

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը ներառում է վարքի տարբեր տեսակներ, ինչպես օրինակ՝ լուսանկարների կամ տեսանկարների վրա հիմնված սեռական բռնության բոլոր ձևերը (օրինակ՝ սեռական բնույթի լուսանկարների կամ տեսանյութերի առցանց ստեղծումը և տարածումը առանց տուժողի համաձայնության), ինչպես նաև ԱԲ միջոցով ստեղծված «դիփֆեյք պոռնոգրաֆիան», անձնական տվյալների չարտոնված դիտումը, մանիպուլյացումը կամ տարածումը (օրինակ՝ դոքսինգը), ինքնության գողությունը կամ այլ անձի անունից հանդես գալը (օրինակ՝ կեղծ պրոֆիլների ստեղծումը), գործողություններ, որոնք վնասում են անձի հեղինակությանը, անձի նկատմամբ վերահսկողության գործողությունները (օրինակ՝ առցանց հետամտումը), առցանց (սեռական) հետապնդումը, կիբերահաբեկումը, առցանց սեռական և ֆիզիկական սպառնալիքները և դաժան վերաբերմունքը, թվային «ես»-ի հետապնդումը և նսեմացումը, օրինակ՝ ավատարները:

Ինչպես ներկայացվում է այս տեղեկատվական ձեռնարկի հաջորդ մասերում, կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը նկարագրելու համար EDVAW հարթակի անդամներն օգտագործում են եզրույթների լայն շրջանակ: Թեև EDVAW մեխանիզմների տերմինաբանությունները տարբեր են, դրանց հիմքում ընկած մոտեցումը հիմնականում նույնն է: Այսինքն՝ տերմինաբանությունների միջև տարբերությունը չի ենթադրում բռնության որոշակի ձևերի բացառում: Իրականում տերմինաբանությունը տարբեր է նաև ՏՀՏ-ների և ԱԲ վրա հիմնված տեխնոլոգիաների շարունակական զարգացման պատճառով, ինչը հանգեցնում է թվային բռնության կիրառման ձևերի շարունակական փոփոխմանը: Տերմինաբանությունն ընտրելիս պետք է խուսափել այնպիսի եզրույթներից, որոնք բռնությանը սենսացիոն բնույթ են հաղորդում կամ մեղքը բարդում են տուժողի վրա: Այսպիսի մոտեցումը կարող է օգնել կանանց և աղջիկներին ավելի հստակ բնութագրելու իրենց հետ կատարվածը:

Այս ձեռնարկում «կանանց նկատմամբ թվային բռնություն» հասկացությունը դիտարկվում է որպես համապարփակ եզրույթ, որը ներառում է կանանց նկատմամբ գենդերային բռնության մաս հանդիսացող առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող գործողությունների լայն շրջանակ (GREVIO, 2021թ.): Այն կենտրոնանում է կանանց ու աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող գենդերային բռնության ընդհանուր փորձառությանը վերաբերող օրենքների, քաղաքականության և պրակտիկայի վրա: Ի նկատի ունենալով կանանց նկատմամբ գենդերային բռնության հետ կապը, այս աշխատությունում, այնուամենայնիվ, չեն քննարկվում երեխաների նկատմամբ սեռական առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը, ինչպես նաև սեռական շահագործման նպատակով մարդկանց տեխնոլոգիապես օժանդակվող թրաֆիքինգը, քանի որ մարդու իրավունքների այդ խախտումները պահանջում են հատուկ ուսումնասիրություն և ավելի համապարփակ կերպով կարգավորվում են մարդու իրավունքների այլ միջազգային և տարածաշրջանային պայմանագրերով և մոնիթորինգային մեխանիզմներով[3]:

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բնույթին, տարածվածությանն ու ազդեցությանը վերաբերող մի շարք առանցքային տարրեր հարկ է հաշվի առնել՝ որպես բռնության կանխարգելման, տուժողների աջակցության և կրած վնասի փոխհատուցման մեխանիզմների մշակման նախապայմաններ: Առաջին՝ այն նոր երևույթ չէ, քանի որ այն բխում է կյանքի բոլոր ոլորտներում առկա գենդերային խտրականության, խո-

[3] Օրինակ՝ երեխաների վաճառքի և սեռական շահագործման հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, Մարդկանց թրաֆիքինգի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիայի Կողմերի կոմիտեն (նաև հայտնի է որպես Լանզարոտեի կոմիտե), և Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խումբը (GRETA):

ը արմատացած մշակութային նորմերի և կանանց համակարգային բռնության համատեքստից: Երկրորդ՝ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը կանանց և աղջիկների մարդու իրավունքների խախտում է: Երրորդ՝ այն կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բազմաթիվ, փոխկապակցված և կրկնվող ձևերից մեկն է, որն այժմ ներթափանցել է թե՛ առցանց, և թե՛ անցանց աշխարհ: Վերջապես, այն դինամիկ երևույթ է, որն ընդգրկում է ՏՀՏ-ների և ԱԲ միջոցով կատարվող և փոխակերպվող բռնի գործողությունների լայն շրջանակ, որոնք կշարունակեն տարածվել, քանի դեռ մշակվում և կիրառվում են բռնության իրականացման նոր ուղիներ:

Բ. Որքանո՞վ է տարածված կանանց նկատմամբ թվային բռնությունը

Կանանց նկատմամբ թվային բռնությունը տագնապալի ծավալների է հասնում: Համաձայն ՄԱԿ-ի Կայուն զարգացման լայնաշերտ կապի հանձնաժողովի 2015թ.-ի ուսումնասիրության՝ կանանց գրեթե երեք քառորդը ենթարկվել է առցանց գենդերային բռնության, ընդ որում իրավախախտների գրեթե երկու երրորդը տղամարդիկ են (ՄԱԿ-ի Կայուն զարգացման լայնաշերտ կապի հանձնաժողով, 2015թ.): 2020 թվականին «Էկոնոմիստ» հանդեսի հետազոտությունների բաժնի կողմից 45 երկրներում անցկացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կանանց 85%-ը ենթարկվել կամ ականատես են եղել առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության, այդ թվում՝ 74% Եվրոպայում, 91%՝ Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում և 90%՝ Աֆրիկայում («Էկոնոմիստ» հանդեսի հետազոտությունների բաժին, 2021թ.): Amnesty International-ը հրապարակել է Եվրոպայում, Միացյալ Նահանգներում և Նոր Զելանդիայում անցկացված համեմատական հետազոտության արդյունքները, որը ցույց է տվել, որ հարցված կանանց մոտ մեկ քառորդը կյանքում առնվազն մեկ անգամ ենթարկվել է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող գենդերային բռնության (Amnesty International, 2017թ.):

2021 թվականին ՄԱԿ-Կանայք կազմակերպությունը հրապարակեց զեկույց Մերձավոր Արևելքի վերաբերյալ, համաձայն որի կանանց 60%-ը ենթարկվել է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության և վերջին մեկ տարում հայտնել է դրա մասին (ՄԱԿ-Կանայք, 2021b): 2020 թվականին Ուգանդայում գործող «Pollicy» ֆեմինիստական խումբը հետազոտություն է անցկացրել Եթովպիայում, Քենիայում, Հարավային Աֆրիկայում, Սենեգալում և Ուգանդայում կանանց նկատմամբ առցանց բռնության վերաբերյալ, որի արդյունքում պարզվել է, որ կանանց 28%-ը ենթարկվել է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող տարբեր տեսակի բռնության (Pollicy, 2021): 2018 թվականին Բրազիլիայի խորհրդարանի պատվերով իրականացված ազգային ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կանանց նկատմամբ բռնության 68000 քրեական գործերից 2788-ը թվային բաղադրիչ են ունեցել, ընդ որում հանցագործների մեծամասնությունը ներկա կամ նախկին զուգընկերներն են (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

Քանի որ կանայք ենթարկվում են տարբեր տեսակի խտրականության, բարձրանում է նրանց նկատմամբ նաև առցանց և տեխնոլոգիական օժանդակվող բռնության կիրառման հավանականությունը, իսկ դրա հետևանքներն ավելի ծանր են դառնում: Գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, սեռական կողմնորոշման, հաշմանդամության, ռասայի, էթնիկ պատկանելության, ծագման, տարիքի, կրոնի, հասարակական կյանքին մասնակցության և այլ գործոնների հիման վրա ինտերսեկցիոնալ խտրականությունը սրում, խորացնում և բարդացնում է գենդերային բռնությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սոցիալական մեդիայում վիրավորական բնույթի հրապարակումներում սևամորթ կանայք 84%-ով ավելի

հաճախ են հիշատակվում, քան սպիտակամորթները (Amnesty International, 2018թ.): Մեկ այլ ուսումնասիրություն ցույց է տվել, որ իրենց որպես լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս և քուիր (ԼԳԲՏՔ*) նույնացնող աղջիկների և երիտասարդ կանանց 42%-ը, իրենց հաշմանդամ համարողների 14%-ը, և իրենց որպես էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ նույնացնողների 37%-ը հայտնել են, որ ենթարկվել են առցանց բռնության՝ կապված այս հատկանիշների հետ (Plan International, 2020թ.):

Վերջապես, հարկ է նշել, որ վերը քննարկված ուսումնասիրություններում ներկայացված են սեփական փորձառության մասին մարդկանց պատասխանները, որոնք բարձր հավանականությամբ էապես նվազեցնում են առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունների ծավալները, քանի որ շատ կանայք չգիտեն, որ դարձել են բռնության զոհ: Օրինակ՝ եթե կնոջ սեռական բնույթի նկարները տարածվել են համացանցում առանց իր իմացության կամ համաձայնության:

Գ. Որո՞նք են կանանց նկատմամբ թվային բռնության հետևանքները

Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը կործանարար ազդեցություն ունի կանանց ու աղջիկների և ընդհանրապես հասարակության վրա: Այն անողոք է և տևական, ընդ որում հատկապես վնասակար է բռնության շարունակականությունը: Դրա հիմնական վնասներից են.

- *Համապարփակ վնաս,* որն ազդում է կյանքի բոլոր կողմերի վրա՝ հանգեցնելով «սոցիալական տարանջատման», երբ կնոջ կյանքը բաժանվում է բռնությունից «առաջ» և «հետո»:
- *Ֆիզիկական վնաս,* այդ թվում՝ ֆիզիկական վնասի սպառնալիքներ, հանգեցնելով անցանց բռնության կամ առցանց ագրեսիայի պատճառով անապահովության զգացմունքի, որը երբեմն ներկայացվում է որպես «էքզիստենցիալ սպառնալիք» կամ «հետապնդող ստվեր» (UNESCO, 2020թ.):
- *Հոգեբանական վնաս,* որը կարող է ունենալ կործանարար և մահաբեր ազդեցություն, ներառյալ դեպրեսիան, անհանգստությունը, սթրեսը, ինքնասպանության մտքերը, վախերը և խուճապի նոպաները:
- *Տնտեսական և մասնագիտական վնաս,* որը ներառում է մասնագիտական և ֆինանսական բացասական ազդեցություն՝ դպրոցական պարապմունքներից բացակայություն, կրթության կամ աշխատանքի կորուստ, խորհրդատվության, իրավական գործողությունների, աջակցության և փոխհատուցման այլ ձևերի ծախսային բեռ, ինչպես նաև մասնագիտական առաջընթացի հնարավոր կորուստ այն պատճառով, որ կինը սահմանափակում է իր ակտիվությունն ու ներկայությունը սոցիալական ցանցերում կամ հեռացնում է իր էջը բռնությունից պաշտպանվելու նպատակով:
- *Վնասներ հարաբերություններում և երկրորդային վիկտիմիզացիա,* օրինակ՝ երբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության պատճառով տուժողի մոտ առաջանում է «մեկուսացման» խորը զգացողություն նրան ուղղված զոհին մեղադրող մեկնաբանությունների, ինչպես նաև բռնության հետևանքով, խաթարելով նրա վստահությունն ու կապերը ընտանիքի և ընկերների, առցանց աշխարհի և սոցիալական մեդիայի հետ:

Հասարակությունը նույնպես տուժում է կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարածվածության պատճառով: Նման վնասակար հետևանքներից են.

- *Կանանց առցանց խոսքի ազատության սահմանափակումներ.* առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը հաճախ հանգեցնում է կանանց սոցիալական ցանցերում ակտիվության և ներկայության սահմանափակմանը կամ առցանց կյանքից հեռանալուն՝ դրանով իսկ սահմանափակելով նրանց արտահայտվելու ազատությունը, ինչպես նաև բացասաբար է անդրադառնում ողջ հասարակության վրա՝ լռեցնելով կանանց ձայնը (ՄԱԿ-կանայք, 2021b):
- *Գենդերային թվային անհավասարության խորացում.* կանանց նկատմամբ թվային բռնությունը միտված է արմատավորելու և խորացնելու կանանց և տղամարդկանց համար ՏՀՏ-ների և ԱԲ վրա հիմնված տեխնոլոգիաների հասանելիության և օգտագործման միջև առկա բացը, քանի որ կանայք ստիպված են լինում հեռանալ թվային աշխարհից (UNICEF, 2021թ.):
- *Թվային տիրույթների բազմազանության կրճատում.* ինտերսեկցիոնալ խտրականությանը բախվող կանայք ավելի հավանական է, որ թիրախավորվեն առցանց և, որպես հետևանք, սահմանափակեն իրենց առցանց մասնակցությունը և ակտիվությունը, ինչը նվազեցնում է սոցիալական, քաղաքական և հասարակական բանավեճերի, ինչպես նաև բոլոր առցանց աշխարհների բազմազանությունն ու ներառական բնույթը (ՄԱԿ-կանայք, 2020թ.):
- *Հասարակության համար սոցիալ-տնտեսական բացասական հետևանքներ.* կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ թվային բռնությունը, զգալի ֆինանսական հետևանքներ ունի ողջ հասարակության համար՝ տնտեսական ակտիվության կորստի և առողջության հետ կապված ծախսերի աճի պատճառով (EIGE, 2021թ.):

II. EDVAW հարթակի մեխանիզմները և կանանց նկատմամբ թվային բռնությունը

Այս բաժինում ներկայացված են EDVAW հարթակը կազմող մանդատների համառոտ նկարագրությունը և դրանց կողմից մշտադիտարկվող համապատասխան իրավական չափանիշների փաթեթը՝ կենտրոնանալով կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հետ դրանց առնչության վրա: Այստեղ ներկայացված են տերմինաբանական շրջանակը, ինչպես նաև կանանց իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մեխանիզմների նախաձեռնած հետազոտությունները, իրազեկման արշավները և կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքների բարելավմանն ուղղված քայլերը՝ իրենց երկրի հատուկ կամ թեմատիկ մոնիթորինգային աշխատանքի համատեքստում:

Ա. Միավորված ազգերի կազմակերպության Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW)

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) ստեղծվել է 1982 թվականին՝ վերահսկելու Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարումը: Այն կազմված է քսաներեք անկախ փորձագետներից, որոնք գնահատում են երկրներում Կոնվենցիայի կիրարկումը և թողարկում ազգային առաջընթացի վերաբերյալ «վերջնական զեկույց»: CEDAW-ն կարող է նաև ստանալ կանանց իրավունքների ոտնահարման մասին անհատական բողոքներ և հետաքննություն նախաձեռնել բարդ կամ համակարգված խախտման դեպքերի վերաբերյալ: CEDAW-ն ընդունում է նաև Ընդհանուր հանձնարարականներ, որոնք, թեև պաշտոնապես իրավաբանորեն պարտավորեցնող չեն, բայց հեղինակավոր հայտարարություններ են մասնակից պետությունների կողմից ստանձնած իրավական պարտականությունների բովանդակության վերաբերյալ, որոնք հստակեցնում են պայմանագրի դրույթների մեկնաբանման մոտեցումները: 1992թ.-ին CEDAW-ն ընդունեց կանանց նկատմամբ բռնության մասին թիվ 19 Ընդհանուր հանձնարարականը, որը թարմացվել է 2017թ. կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության մասին թիվ 35 Ընդհանուր հանձնարարականի ընդունմամբ:

CEDAW-ն արգելում է կանանց նկատմամբ խտրականությունը, որը մեկնաբանվում է որպես «սեռի հիմքով կատարվող ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում»: Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը պարզաբանում է, որ «կանանց նկատմամբ գենդերային բռնությունը» Կոնվենցիայով սահմանված խտրականության ձև է: Գենդերային հիմքով բռնությունը սահմանվում է որպես «բռնություն, որն ուղղված է կնոջ դեմ, քանի որ նա կին է կամ որն անհամաչափորեն է ազդում կանանց վրա» և, որպես այդպիսին, հանդիսանում է մարդու իրավունքների խախտում: CEDAW-ն ընդգծում է գենդերային բռնության ինտերսեկցիոնալ ըմբռնման կարևորությունը՝ սահմանելով թիվ 35 Ընդհանուր հանձնարարականում բռնության և խտրականության դրսևորումների վրա ազդող տարբեր բնութագրիչների և ինքնությունների ընդարձակ ցանկ:

Կանանց նկատմամբ թվային բռնությունն ուսումնասիրելիս CEDAW-ն օգտագործում է մի շարք եզրույթներ: Թեև Կոմիտեն 2016թ. ազգային զեկույցներում անդրադարձել էր կանանց նկատմամբ թվային բռնությանը, հենց թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը հստակորեն սահմանեց առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը՝ որպես կանանց նկատմամբ

գենդերային հիմքով բռնության նոր ձև, որը գտնվում է CEDAW-ի շրջանակում: Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը սահմանում է կանանց նկատմամբ բռնությունը որպես «բազմաթիվ, փոխկապակցված և կրկնվող բռնության ձևերի ամբողջություն, որը կատարվում է տարբեր միջավայրերում՝ մասնավորից մինչև հանրային, ներառյալ տեխնոլոգիական միջավայրերը»: Տեքստը վերաբերում է նաև «բռնության այն ձևերին, որոնք տեղի են ունենում առցանց և այլ թվային միջավայրերում:

CEDAW-ը անդրադարձել է թվային բռնությանը նաև իր հաջորդ Ընդհանուր հանձնարարականներում, այդ թվում՝ թիվ 33 (2015)՝ կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ, որտեղ այն ճանաչում է կանանց հզորացման հարցում թվային տարածքների և ՏՀՏ-ի կարևոր դերը, և թիվ 36 (2017), որն ուսումնասիրում է, թե ինչպես է կիբերբուլինգն անդրադառնում աղջիկների վրա: Մարոկկոյի, Էկվադորի, Շվեդիայի և Դանիայի վերաբերյալ իր վերջին ազգային զեկույցներում CEDAW-ն ողջունել է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հիմնախնդրի շուրջ վերջին իրավական բարեփոխումները[4]:

Բ. Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող (ՄԱԿ-ի հատուկ զեկուցող)

1994 թվականին ՄԱԿ-ը ստեղծեց կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցողի պաշտոնը (Մարդու իրավունքների խորհուրդ, 1994 թ.), որին հանձնարարված է փնտրել և ստանալ տեղեկատվություն կառավարություններից, պայմանագրային մարմիններից, մասնագիտացված գործակալություններից, իրավապաշտպան այլ մարմիններից, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններից, ներառյալ կանանց կազմակերպություններից և արդյունավետ արձագանքել այդ տեղեկատվությանը: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը միջոցներ է առաջարկում տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը, պատճառները և հետևանքները վերացնելու համար (Մարդու իրավունքների խորհուրդ, 2019b): Այս աշխատանքն իրականացվում է երկիր այցելությունների, տարեկան զեկույցների, ներառյալ թեմատիկ զեկույցների, քաղաքացիական հասարակության և այլ ազգային, տարածաշրջանային և միջազգային մարմինների հետ խորհրդակցությունների միջոցով:

Գենդերային բռնության թվային հարթությունն առաջին անգամ դիտարկվել է 2006թ. Գլխավոր քարտուղարի կողմից՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ իր խորքային ուսումնասիրության մեջ (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2006թ.), որտեղ նա նշել է, որ բռնության նոր ձևերը ճանաչելու և դրանց դեմ ավելի լավ պայքարելու համար անհրաժեշտ են ՏՀՏ-ների կիրառման վերաբերյալ նոր ուսումնասիրություններ: Մարդու իրավունքների խորհուրդն իր 20/8 բանաձևում հստակ նշել է, որ նույն իրավունքները, որոնք մարդիկ ունեն իրական կյանքում, պետք է պաշտպանվեն նաև առցանց: Ընդհանուր առմամբ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների քաղաքականությունում նշվում է, որ նորմատիվ մակարդակում «տեխնոլոգիայի և կանանց իրավունքների չափանիշների փոխազդեցությունը նշանավորվում է այն սկզբունքի ճանաչմամբ, որ մարդու անցանց պաշտպանվող իրավունքները պետք է պաշտպանվեն նաև առցանց» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2016թ.):

[4] CEDAW-ի բոլոր եզրափակիչ դիտարկումները հասանելի են այստեղ՝ www.ohchr.org/en/treaty-bodies/cedaw:

2018թ.-ին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը պատրաստեց ուղենշային զեկույց, որտեղ վերլուծում էր կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և ՏՀՏ–ներով օժանդակվող բռնությունը մարդու իրավունքների տեսանկյունից: Այն սահմանում է կանանց նկատմամբ բռնության հարցում զարգացող տեխնոլոգիաների ազդեցության ուսումնասիրության շրջանակը, ներառյալ կանխարգելումը, պաշտպանությունը, քրեական հետապնդումը, փոխհատուցումը, և սահմանում է ՄԱԿ-ի, պետությունների և համացանցային միջնորդների գործողությունների վերաբերյալ առաջարկություններ: Այս զեկույցը կազմվել է ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի գնահատման և մոնիթորինգի, ազգային և թեմատիկ զեկույցների հիման վրա՝ հիմք ապահովելով ՄԱԿ-ի հետագա գործունեության և այս ոլորտում ազգային և տարածաշրջանային այլ աշխատանքների համար:

Հաշվի առնելով տերմինաբանության բազմազանությունը՝ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը դիտարկում է «կանանց նկատմամբ ՏՀՏ օժանդակությամբ բռնությունը»՝ որպես առավել ընդգրկուն եզրույթ, սակայն հիմնականում օգտագործում է «կանանց նկատմամբ առցանց բռնություն» եզրույթը որպես ավելի հարմար արտահայտություն՝ միևնույն ժամանակ կիրառելով նաև «կիբերբռնություն» և «տեխնոլոգիայի օժանդակությամբ բռնություն» եզրույթները որպես այլընտրանքներ (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018թ.): ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն ընդունում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության սահմանումը, որն ընդգրկում է «կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության ցանկացած գործողություն, որը կատարվել, օժանդակվել կամ սրվել է մասամբ կամ ամբողջությամբ ՏՀՏ-ի, օրինակ՝ բջջային հեռախոսների և սմարթֆոնների, համացանցի, սոցիալական մեդիա հարթակների կամ էլեկտրոնային փոստի կիրառմամբ կնոջ դեմ, քանի որ նա կին է կամ անհամաչափորեն է ազդում կանանց վրա» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018թ.): ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել է նաև, որ կարևոր է հրաժարվել կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերի սահմանելու և ցուցակագրելու գաղափարից՝ թվային տեխնոլոգիաների և տիրույթների արագ զարգացման պատճառով, ներառյալ ԱԲ, որն անխուսափելիորեն կհանգեցնի նման բռնության նոր դրսևորումների:

Կանանց նկատմամբ թվային բռնությունը ներառված է ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ երկրներ այցերի զեկույցներում[5]: Օրինակ, 2018 թվականին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը Ավստրալիայի վերաբերյալ զեկույցում ողջունեց կանանց և երեխաների նկատմամբ առցանց բռնության դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված աշխատանքը՝ իրավական բարեփոխումները և այդ հարցում հանրային գործակալության՝ eSafety հանձնաժողովի դերի ընդլայնումը: 2019 թվականին Կանադայի վերաբերյալ զեկույցում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը ողջունեց պատկերի վրա հիմնված սեռական բռնության վերաբերյալ նոր քրեական օրենքների ընդունումը: 2020 թվականին Էկվադորի վերաբերյալ զեկույցում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել էր, որ կանանց նկատմամբ առցանց բռնությունը նոր հիմնախնդիր է:

Իր թեմատիկ զեկույցներում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն ընդգծել է նաև կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության խնդրի կարևորությունը: Օրինակ, կին լրագրողների մասին զեկույցներ պատրաստելիս ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել է, որ առցանց հետապնդումը կարող է զգալի հետևանքներ ունենալ՝ հանգեցնելով առցանց մասնակցության և ակտիվության սահմանափակմանը, և որ, ի վերջո, թվային բռնությունը «կին լրագրողների

[5] Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի այցերի վերաբերյալ բոլոր զեկույցները հասանելի են այստեղ՝ www.ohchr.org/en/special-procedures/sr-violence-against-women/country-visits:

և լրատվամիջոցների կանանց նկատմամբ ուղղակի հարձակում է կանանց տեսանելիության և հասարակական կյանքում նրանց լիարժեք մասնակցության վրա» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2020թ.):

Գ. Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբ (ՄԱԿ-ի աշխատանքային խումբ)

Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը, որը ստեղծվել է 2010 թվականին, բաղկացած է հինգ անկախ փորձագետներից, որոնց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից հանձնարարված է երկխոսություն ծավալել պետությունների և մարդու իրավունքների դերակատարների հետ՝ բացահայտելու, խթանելու և կարծիքներ փոխանակելու կանանց նկատմամբ խտրականության տարրեր պարունակող օրենքների վերացմանն ուղղված լավագույն փորձի վերաբերյալ: Այն նաև աջակցություն է առաջարկում պետություններին խտրականության բազմաթիվ ձևերի դեմ պայքարի վերաբերյալ իրենց հանձնառությունների կատարման հարցում: ՄԱԿ-ի աշխատանքային խումբը թողարկում է թեմատիկ զեկույցներ, կազմակերպում է այցեր տարբեր երկրներ և հաղորդակցվում պետությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ: Այն նաև մասնակցում է այլ նախաձեռնություններին, ինչպիսիք են հրապարակային հայտարարությունները, «amicus»-ի ամփոփագրերը, դիրքորոշման փաստաթղթերը, մասնակցությունը միջոցառումներին և ներդրումները ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ մարմինների և գործակալությունների աշխատանքին:

ՄԱԿ-ի աշխատանքային խումբը հիմնվում է կանանց նկատմամբ խտրականության, կանանց նկատմամբ բռնության և ինտերսեկցիոնալության սահմանումների վրա, որոնք ներկայացված են CEDAW-ի և ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ զեկույցներում (Մարդու իրավունքների խորհուրդ, 2020b): 2018 թվականին Սամոայի վերաբերյալ ազգային զեկույցում առաջին անգամ անդրադարձ եղավ թվային բռնությանը՝ վկայակոչելով CEDAW-ի թիվ 35 հանձնարարականը[6]: Ավելի ուշ, ուսումնասիրելով կանանց իրավունքները փոփոխվող աշխատաշուկայում և աղջիկների ու երիտասարդ կանանց ակտիվությունը, ՄԱԿ-ի աշխատանքային խումբը հատուկ ուշադրություն է դարձնում տեխնոլոգիական զարգացումների արդյունքում առաջացած նոր ռիսկերի և մարտահրավերների վրա, ինչպիսիք են աշխատավայրում և տանը կանանց վերահսկողությունը և դիտարկումը՝ նրանց էլեկտրոնային սարքերի միջոցով (Մարդու իրավունքների խորհուրդ, 2022թ.): Օրինակ, նշվում են թվային տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են երիտասարդ կին և աղջիկ ակտիվիստներին «շանտաժի ենթարկելու, վերահսկելու, հետևելու, հարկադրելու, հետապնդելու, նվաստացնելու կամ թիրախավորելու նպատակով, այդ թվում՝ «դիփֆեյք» պոռնոգրաֆիկ բովանդակության և մահվան սպառնալիքների միջոցով» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2022թ.):

Իր հաղորդակցման ընթացակարգերում ՄԱԿ-ի աշխատանքային խումբը շեշտել է գենդերային թվային բռնությունը, բերելով Հնդկաստանում կին լրագրողի նկատմամբ առցանց բռնության օրինակը (ՄԱԿ-ի աշխատանքային խումբ, 2022թ.) և Ղազախստանում համբուրվող լեսբիների զույգի տեսանյութի նկարահանումն ու տեղադրումը՝ առանց նրանց համաձայնու-

[6] Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի տարբեր երկրներ այցելությունների վերաբերյալ բոլոր զեկույցները հասանելի են հետևյալ հղումով՝ www.ohchr.org/en/special-procedures/wg-women-and-girls/country-visits:

թյան (ՄԱԿ-ի աշխատանքային խումբ, 2019թ.): Կանանց նկատմամբ թվային բռնությունը հիշատակվում է նաև տարբեր երկրներ այցերի վերջին զեկույցներում: Օրինակ՝ Հոնդուրասի 2019 թվականի զեկույցում մտահոգություն հնչեց «օրենքով չկարգավորվող կիբերբռնության վերաբերյալ» (*օրինակներ՝ կիբերհետապնդում և առանց համաձայնության սեռական բնույթի նկարների հրապարակում, այդ թվում՝ հասարակական և քաղաքական գործիչների*)»: Ռումինիայի մասին իր 2021 թվականի զեկույցում ՄԱԿ-ի աշխատանքային խումբը նշել է, որ «գենդերային բռնության նոր ձևերը, ինչպիսիք են վրեժխնդիր պոռնոգրաֆիան և կիբերբռնությունը, ավելի խնդրահարույց են դառնում, հատկապես աղջիկների և երիտասարդ կանանց համար»:

Դ. Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող

Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի կառույցը ստեղծվել է Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի կողմից 1998 թվականին: Հատուկ զեկուցողը լիազորված է աջակցել աֆրիկյան կառավարություններին կանանց իրավունքների ամրապնդման և պաշտպանության քաղաքականության մշակման ու իրականացման գործում, մասնավորապես՝ Աֆրիկայում կանանց իրավունքների վերաբերյալ մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան խարտիայի արձանագրության (Մապուտոյի արձանագրություն) համաձայն ձեռնարկել քարոզչական և փաստահավաք առաքելություններ աֆրիկյան երկրներում, հետևել Մապուտոյի արձանագրության իրականացմանը, պատրաստել զեկույցներ Աֆրիկայում կանանց իրավունքների իրավիճակի վերաբերյալ և առաջարկել բանաձևեր և առաջարկություններ, որոնք պետք է ընդունվեն Հանձնաժողովի կողմից:

Մապուտոյի արձանագրության 1-ին հոդվածի «ժ» կետը սահմանում է կանանց նկատմամբ բռնությունը որպես «կանանց նկատմամբ իրականացվող բոլոր գործողությունները, որոնք պատճառում են կամ կարող են պատճառել ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական վնաս, ներառյալ նման գործողություններ կատարելու սպառնալիքը, կամ կամայական սահմանափակումները, կամ մասնավոր և հասարակական կյանքում հիմնարար ազատություններից զրկելը՝ խաղաղ ժամանակ և զինված հակամարտությունների կամ պատերազմի իրավիճակներում»: Չնայած Մապուտոյի արձանագրությունում ինտերսեկցիոնալ գործոնը հստակ չի նշվում, այն անդրադառնում է կանանց տարբեր խմբերին, ինչպիսիք են «փախստական կանայք» (հոդված 4), «տարեց կանայք» (հոդված 22), «հաշմանդամություն ունեցող կանայք» (հոդված 23) և «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կանայք» (հոդված 24):

2022 թվականին Աֆրիկյան հանձնաժողովը (Աֆրիկայում կանանց իրավունքների հատուկ զեկուցողի մասնակցությամբ) ընդունեց հատուկ բանաձև թվային բռնությունից կանանց պաշտպանության մասին՝ ընդգծելով կանանց նկատմամբ թվային բռնության նշանակությունը, տարածվածությունը, բնույթը և ազդեցությունը, ինչպես նաև կարևորելով իրազեկման տարբեր միջոցառումները: Բանաձևը պարտավորեցնում է մասնակից պետություններին մշակելու թվային միջավայրում կանանց պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ՝ ներառյալ օրենսդրական, քաղաքական և այլ միջոցառումները, իրազեկող ծրագրերը և զոհերի հետ աշխատող մարդկանց վերապատրաստումները:

Ե. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խումբ (GREVIO)

Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) ուժի մեջ մտնելուց հետո 2015 թվականին ստեղծվեց Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խումբը (GREVIO)՝ որպես Մասնակից պետությունների կողմից հանձնառությունների կատարման մոնիթորինգի համար պատասխանատու անկախ մասնագիտացված մարմին: GREVIO-ն կազմված է մարդու իրավունքների, գենդերային իրավահավասարության, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կամ տուժողներին աջակցության և պաշտպանության ոլորտներում բազմամասնագիտական փորձ ունեցող տասնհինգ ընտրված անդամներից: 2017թ.-ից GREVIO-ն այցեր է իրականացրել տարբեր երկրներ և ներկայացրել է ազգային զեկույցներ՝ գնահատելով մասնակից պետությունների կողմից Կոնվենցիան գործարկելու համար ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցները: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է գործողություն՝ կանխելու Կոնվենցիայում սահմանված բռնության ցանկացած ակտի լուրջ, զանգվածային կամ մշտական դրսևորումը, GREVIO-ն կարող է նախաձեռնել հատուկ հետաքննություն: Այն կարող է նաև ընդունել ընդհանուր հանձնարարականներ, որոնք, թեև իրավաբանորեն պարտավորեցնող չեն, սակայն կարևոր հենանիշ են կողմերի համար՝ հստակ առաջարկություններով նպաստելով Ստամբուլյան կոնվենցիայի իրականացմանը և մշտադիտարկմանը:

Ստամբուլյան կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ կանանց նկատմամբ բռնությունը սահմանվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև, որը ներառում է «գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել հանրային կամ մասնավոր կյանքում կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնասին, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը»: Կոնվենցիայի համաձայն՝ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը «նշանակում է բռնություն, որն ուղղված է կնոջ նկատմամբ, քանի որ նա կին է կամ անհամաչափորեն է ազդում կանանց վրա»: Այս համապարփակ սահմանումները ներառում են հոգեբանական և տնտեսական վնասները, որոնք հատկապես վերաբերելի են թվային բռնությանը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ դրա իրականացումը պետք է ապահովվի «առանց որևէ հիմքով խտրականության»: GREVIO-ն ընդունել է «ինտերսեկցիոնալ խտրականություն» եզրույթը, որպեսզի համակարգված գնահատի՝ արդյոք մասնակից պետությունները Կոնվենցիան կիրառելիս ուշադրություն են դարձնում բազմակի և բազմասեկտոր խտրականության ազդեցությանը կանանց նկատմամբ գենդերային բռնության տարբեր դրսևորումներում:

Կանանց նկատմամբ թվային բռնությունը ճանաչվել է ի սկզբանե՝ Ստամբուլյան կոնվենցիայի Բացատրական զեկույցում, որն անդրադառնում է, մասնավորապես, թվային ոլորտում հետապնդումներին: 2021 թվականին GREVIO-ն ընդլայնեց այս մոտեցումը՝ ընդունելով կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնության վերաբերյալ իր առաջին Ընդհանուր հանձնարարականը, որն ուրվագծում է կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքում Կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունները: Մասնավորապես, այն նշում է թվային բռնության և դաժան վերաբերմունքի տարածվածությունն ու բնույթը, ինչպես նաև այն, թե ինչպես է Ստամբուլյան կոնվենցիան կիրառվում այս համատեքստերում՝ ընդգծելով առցանց և անցանց բռնությունների փոխկապվածությունը և

առաջարկություններ է մշակում մասնակից պետությունների համար: Ընդհանուր հանձնարարականում GREVIO-ն օգտագործում է «կանանց նկատմամբ թվային բռնություն» եզրույթը, որը ներառում է կանանց և աղջիկների նկատմամբ առցանց (համացանցում՝ ներառյալ հանրայնորեն հասանելի (surface web) և միայն մասնագիտացված բրաուզերների համար հասանելի (dark web), կատարված գործողություններն ու հասանելի տվյալները) և տեխնոլոգիապես օժանդակվող (գործողություններ, որոնք իրականացվում են տեխնոլոգիայի և կապի սարքավորումների օգտագործմամբ, այդ թվում՝ սարքերի և ծրագրային ապահովման) վնասակար վարքը (GREVIO, 2021թ.): Եզրույթը նպատակ ունի ընդգծելու, որ այս վնասակար վարքը անհամաչափորեն ուղղված է կանանց և աղջիկներին և հանդիսանում է նրանց նկատմամբ գենդերային բռնության առանցքային տարրը: Ազգային մակարդակում GREVIO-ն ուսումնասիրել է մասնակից պետությունների կողմից կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքման գործողությունները՝ ներառյալ Բելգիայի, Գերմանիայի, Մալթայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սան Մարինոյի, Սլովենիայի և Իսպանիայի վերաբերյալ նախնական գնահատման զեկույցներում[7]:

Ստամբուլյան կոնվենցիան լրացնում են Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այլ չափորոշիչները, ինչպիսին է Կիբերհանցագործության մասին կոնվենցիան (Բուդապեշտի կոնվենցիա), որն առաջարկում է իրավաբանորեն պարտավորեցնող չափորոշիչների համապարփակ փաթեթ՝ կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցներ պարունակող ցանկացած հանցագործության դեմ համապարփակ ազգային օրենսդրություն մշակելու համար: Այս համատեքստում հարկ է նշել, որ կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ GREVIO-ի թիվ 1 Ընդհանուր հանձնարարականի մեկնարկից հետո 2021թ.-ին հրապարակվել է ուսումնասիրություն, որը ցույց է տալիս՝ որքանով Ստամբուլյան և Բուդապեշտի կոնվենցիաները կարող են դինամիկ ձևով փոխլրացնել միմյանց՝ կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքելու հարցում (Եվրոպայի խորհուրդ, 2021թ.):

Զ. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման մասին միջամերիկյան կոնվենցիայի իրականացման հսկիչ մեխանիզմը (MESECVI)

1994 թվականին Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման մասին միջամերիկյան կոնվենցիայի ընդունումից հետո (ավելի հայտնի է որպես Բելեմ դը Պարայի կոնվենցիա), 2004 թվականին ստեղծվեց դրա իրականացման հսկիչ մոնիթորինգային մեխանիզմ՝ MESECVI: MESECVI-ն գնահատում է Կոնվենցիայի մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը: Այն նպաստում է Կոնվենցիայի իրականացմանը և Մասնակից պետությունների միջև տեխնիկական համագործակցության համակարգ է սահմանում՝ տեղեկատվության, փորձի և լավագույն պրակտիկաների փոխանակման նպատակով:

Բելեմ դը Պարայի կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան՝ MESECVI-ն դիտարկում է կանանց նկատմամբ բռնությունը որպես գենդերային բռնության տեսակ, որը սահմանվում է որպես «գենդերային հիմքով ցանկացած արարք կամ վարք, որը հանգեցնում է կնոջ մահվան կամ ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի՝ հանրային կամ մասնավոր ոլորտներում»: MESECVI-ն ճանաչում է կանանց նկատմամբ բռնության ինտերսեկցիոնալ բնույթը, քանի որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը պահանջում է Մասնակից պետու-

[7] GREVIO-ի բազային գնահատման բոլոր զեկույցները հասանելի են՝ www.coe.int/en/web/istanbul-convention/country-monitoring-work կայքում:

թյուններից «հաշվի առնել բռնության հանդեպ կանանց խոցելիությունը՝ ի թիվս այլոց, նրանց ռասայական կամ էթնիկ պատկանելության, միգրանտի, փախստականի կամ տեղահանված անձի կարգավիճակի պատճառով, [ինչպես նաև] հղիության ընթացքում բռնության ենթարկված կամ հաշմանդամություն ունեցող կանանց, անչափահասներին, տարեցներին, սոցիալապես անապահովներին, զինված հակամարտությունից տուժածներին կամ ազատությունից զրկված կանանց»:

Իր հսկիչ գործունեության շրջանակներում[8] MESECVI-ն մի շարք երկրների զեկույցներում անդրադարձել է թվային հարթությանը, այդ թվում՝ Էկվադորի, Էլ Սալվադորի և Հոնդուրասի (MESECVI, 2020a, 2020b, 2017): MESECVI-ն իր ազգային զեկույցներում հիմնվում է մասնակից պետությունների կողմից օգտագործվող եզրույթների վրա: Ավելին, MESECVI-ն հատուկ ուշադրություն է դարձրել առցանց սպառնալիքների, ոտնձգությունների և բռնությունների հանդեպ կին հասարակական գործիչների խոցելիությանը Լատինական Ամերիկայում: Մի շարք հայտարարություններում MESECVI-ն լուրջ մտահոգություն է հայտնել կին լրագրողների և քաղաքական գործիչների նկատմամբ առցանց բռնության դեպքերի վերաբերյալ (MESECVI, 2021, 2020c, 2018):

Գիտելիքի փոխանակման ոլորտում MESECVI-ն իր ներդրումն է ունեցել 2022 թվականին գործարկված Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) զեկույցներում՝ վերնագրված «Կանանց կիբերանվտանգությունը COVID-19 համավարակի ժամանակ. *փորձառություններ, ռիսկեր և ինքնաօգնության ռազմավարություններ նոր թվային նորմայի ու կանանց և աղջիկների նկատմամբ առցանց գենդերային բռնության պայմաններում. հիմնական հասկացություններ, թվային անվտանգության գործիքներ և արձագանքման ռազմավարություններ*», որոնք տեղեկատվություն են տրամադրում առցանց բռնության բնույթի վերաբերյալ և իրազեկում են թվային անվտանգության և առցանց բռնությունից պաշտպանվելու վերաբերյալ: 2022 թվականին MESECVI-ը նաև ներկայացրեց համապարփակ թեմատիկ զեկույց, որը կոչվում է «Կիբերբռնություն և կիբերհետապնդում կանանց և աղջիկների նկատմամբ՝ Բելեմ Դը Պարայի կոնվենցիայի շրջանակներում», որը տրամադրում է Կոնվենցիայի կիրառման համապարփակ վերլուծություն կանանց նկատմամբ թվային բռնության դեպքերում: Այս թեմատիկ հրապարակման մեջ MESECVI-ն անդրադառնում է 2018 թվականին ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի կողմից տրված առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության սահմանմանը և տրամադրում է թվային բռնություն որակվող վարքագծերի ոչ սպառիչ ցանկ (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

2022 թվականին MESECVI-ն նաև մշակել է առցանց անվճար դասընթաց գենդերային համատեքստում թվային անվտանգության վերաբերյալ՝ Կանանց միջամերիկյան հանձնաժողովի ահաբեկչության դեմ պայքարի միջամերիկյան կոմիտեի (CICTE-OAS) կիբերանվտանգության ծրագրի հետ համատեղ: Դասընթացի նպատակն է մասնակիցներին իրազեկել իրենց առցանց միջավայրի առանձնահատկությունների և այնտեղ տեղի ունեցող փոխգործակցության ռիսկերի մասին, ինչպես նաև նրանց հնարավորություն տալ կիբերանվտանգության նոր գործելակերպ յուրացնելու՝ քննադատական և ռազմավարական մտածողության զարգացման միջոցով:

[8] MESECVI-ի մոնիթորինգի բոլոր հաշվետվությունները հասանելի են հետևյալ հասցեով՝ https://belemdopara.org/CIM_MESECVI/country-monitoring:

Է. Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի Կանանց իրավունքների մասին զեկուցող (IACHR զեկուցող)

Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի (IACHR) Կանանց իրավունքների զեկուցողը, որի գրասենյակը ստեղծվել է 1994 թվականին, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի ութ թեմատիկ զեկուցողներից մեկն է, որը մշտադիտարկում է մարդու իրավունքների տարածաշրջանային պայմանագրերը, ներառյալ Մարդու իրավունքների մասին միջամերիկյան կոնվենցիան և Բելեմ դը Պարայի կոնվենցիան: IACHR-ի զեկուցողը կանանց նկատմամբ խտրականության և բռնության դեմ պայքարին արձագանքման ուղղությամբ մասնագիտական ուսումնասիրություններ և առաջարկություններ է պատրաստում ԱՊԿ-ի անդամ երկրների համար : IACHR-ի զեկուցողը նաև զեկույցներ է պատրաստում ամերիկյան մայրցամաքի առանձին երկրներում կանանց իրավիճակի մասին և օգնություն է տրամադրում Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովին անհատական միջնորդությունների և դեպքերի քննության ուղղությամբ այն դեպքերում, եթե մարդու իրավունքների խախտման դեպքը պայմանավորված է գենդերային պատճառներով կամ հետևանքներով:

2018 թվականին IACHR-ն ընդունեց, որ համացանցում կանանց նկատմամբ բռնությունը առանձնանում է որպես գենդերային բռնության նոր տեսակ, որն արագորեն տարածվում է և զգալի վտանգ է ներկայացնում (IACHR, 2018թ.): IACHR-ի զեկուցողը նաև անդրադառնում է կանանց նկատմամբ թվային բռնությանը 2019 թվականին հրապարակած «Բռնություն և խտրականություն կանանց և աղջիկների նկատմամբ. լավագույն փորձը և մարտահրավերները Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում» զեկույցում և 2018թ. հրապարակած «Կին լրագրողները և խոսքի ազատությունը» զեկույցում: Այն ճանաչում է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության աճող սպառնալիքը, մասնավորապես կին լրագրողների և իրավապաշտպանների, ինչպես նաև երիտասարդ կանանց և աղջիկների նկատմամբ: Այս թեմատիկ զեկույցը հորդորում է մասնակից պետություններին ճանաչել գենդերային բռնության նոր ձևերը իրենց իրավական կարգավորումներում, ինչպես նաև ընդգծում է ռազմավարությունների, օրենքների և քաղաքականության ընդունման կարևորությունը, որոնք նպաստում են այս հիմնախնդրի մասին կրթությանն ու իրազեկմանը և պայքարում են թվային հարթակներում կարծրատիպերի և խտրական վերաբերմունքի տարածման դեմ: IACHR-ի զեկուցողը սահմանում է կանանց և աղջիկների նկատմամբ առցանց բռնությունը որպես «գործողություններ, որոնք մասամբ կամ ամբողջությամբ բխում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումից, և հատկապես տարածված են սոցիալական հարթակներում» (IACHR, 2019թ.): Իր աշխատանքում այն որդեգրում է գենդերային և ինտերսեկցիոնալ մոտեցումները կանանց նկատմամբ բռնության հարցում՝ ընդունելով, որ կանայք «իրենց գենդերի պատճառով տղամարդկանց նկատմամբ անհավասար և կառուցվածքային ստորադաս դիրքում են» (IACHR, 2019թ.), որը փոփոխվում է կախված այլ անհատական հատկանիշներից:

III. Կանանց նկատմամբ թվային բռնության հիմնական թեմաներն ու մոտեցումները EDVAW հարթակում

Այս բաժինը ներկայացնում է կանանց նկատմամբ թվային բռնությունը հասկանալու և դրան արձագանքելու համար EDVAW հարթակի անդամների կողմից իրենց ընդհանուր թեմատիկ մշտադիտարկման գործողություններում և ազգային զեկույցներում ներկայացված առանցքային թեմաները:

Ա. Կանանց նկատմամբ թվային բռնությունը որպես անցանց բռնության շարունակություն (կոնտինուում)

Ֆիզիկական բռնությունը հաճախ համարվում է ավելի լուրջ և առանձնացվում է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունից. բազմաթիվ օրենքներ, քաղաքականություններ և պրակտիկաներ կիրառվում են բացառապես անցանց համատեքստում (Եվրոպայի խորհուրդ, 2020թ.): Նման մոտեցումները հաշվի չեն առնում, որ կանանց նկատմամբ բռնությունը դիտվում է որպես առցանց և անցանց փոխներգործության կոնտինուում: Չափազանց կարևոր է նշել, որ ՏՀՏ-ների զարգացումն ինքնին ենթադրում է առցանց և անցանց աշխարհների միջև տարբերությունների պակասեցում (Մարդու իրավունքների խորհուրդ, 2021թ.):

EDVAW հարթակի բոլոր անդամներն ընդունում են կանանց նկատմամբ բռնության առցանց և անցանց դրսևորումների միջև կապը: GREVIO-ն ընդգծել է «կանանց նկատմամբ թվային բռնությունը որպես կանանց նկատմամբ անցանց բռնության շարունակություն» ճանաչելու անհրաժեշտությունը (GREVIO, 2021թ.): MESECVI-ն նույնպես նշում է, որ «կանանց նկատմամբ բռնությունը կարող է [...] սկսվել որպես սեռական հետապնդում փողոցում, «պատվի» դեմ ուղղված բռնություն համայնքում, կամ որպես ֆիզիկական ագրեսիա, որը գործադրվում է սեռական զուգընկերոջ կողմից, և այն կարող է տեխնոլոգիայի միջոցով առանց անձի համաձայնության փոխակերպվել նրա ինտիմ լուսանկարների տարածման, կիբերհետապնդման, սոցցանցերում սեքսիստական խոսքի, բջջային հեռախոսների մոնիթորինգի և այլնի» (OAS/CICTE and OAS/CIM/MESECVI, 2022թ.):

Նմանապես, Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը բացատրում է, որ կանայք կարող են դառնալ «ծանոթությունների առցանց կայքերի միջոցով նախաձեռնած անցանց բռնության զոհ» (Աֆրիկյան հանձնաժողով, 2022b): Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նկատել է, որ շատ կին լրագրողների նկատմամբ առցանց կիբերոտնձգությունները հաճախ վերածվում են ֆիզիկական սպառնալիքների և բռնության (Մարդու իրավունքների խորհուրդ, 2020թ.): IACHR Կանանց իրավունքների հարցերով զեկուցողը նույնպես նշել է, որ աղջիկները «հաճախ հայտնվում են բռնության պարույրի մեջ թե՛ անցանց, թե՛ առցանց, որտեղ նրանք իրենց զգում են մեկուսացած, նվաստացած և ճնշված» (IACHR, 2019թ.):

Բ. Կանանց նկատմամբ թվային բռնության ինտերսեկցիոնալ կողմը

EDVAW հարթակի բոլոր անդամները ճանաչում են կանանց նկատմամբ բռնության ինտերսեկցիոնալ բնույթը՝ «գենդերային բռնությունը կարող է ազդել տարբեր կանանց վրա տարբեր աստիճանի կամ տարբեր ձևերով» (CEDAW, 2017թ.): GREVIO-ի առաջին Ընդհանուր հանձնա-

րարականում հստակ նշվում է, որ գենդերային բռնության թվային ձևերը «կարող են հատկապես դրսևորվել խտրականության ենթարկվող կամ դրա վտանգի տակ գտնվող կանանց և աղջիկների նկատմամբ և կարող են սրվել այնպիսի գործոնների ազդեցության պատճառով, ինչպիսիք են, ի թիվս այլոց, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական պատկանելությունը, կրոնը, սոցիալական ծագումը, միգրացիոն կարգավիճակը կամ հանրահայտ լինելը» (GREVIO, 2021թ.):

Թեև կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը դիտարկելիս EDVAW հարթակի բոլոր մեխանիզմները մանրամասնորեն անդրադառնում են դրա ինտերսեկցիոնալ բնույթին, մինչ օրս դրանք հիմնականում կենտրոնացած են մասնագիտական կարգավիճակի և տարիքի հետ կապված ինտերսեկցիոնալ դրսևորումների վրա: Օրինակ՝ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը և Կանանց իրավունքների հարցերով IACHR-ի զեկուցողն ընդգծել են առցանց չարաշահումները կին լրագրողների նկատմամբ, որոնք ավելի ու ավելի են թիրախավորվում որպես կանանց իրավունքների տեսանելի ներկայացուցիչներ և ստիպված են լինում դիմակայել կիբերհետապնդումների, կիբերհետամտումների, դոքսինգի և առցանց բռնության այլ ձևերի (IACHR, 2019թ., Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b, IACHR, 2018թ.):

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն անդրադարձել է նաև կին իրավապաշտպանների նկատմամբ առցանց բռնությանը (Մարդու իրավունքների խորհուրդ, 2019d), նման մտահոգություն արտահայտել է նաև MESECVI-ն (OAS/CICTE and OAS/CIM/MESECVI, 2022թ.): ՄԱԿ-ի աշխատանքային խումբն, իր հերթին, զեկուցել է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարածվածության մասին, որին ենթարկվում են երիտասարդ կին ակտիվիստներն այնպիսի կարևորագույն հիմնախնդիրների շուրջ քարոզարշավներ իրականացնելիս, ինչպիսիք են սոցիալական անարդարությունը և կլիմայի փոփոխությունը: Սովորաբար, սոցիալական պարսավանքին բախվելիս, երիտասարդ կանայք սահմանափակում կամ դադարեցնում են իրենց առցանց ակտիվությունը (Մարդու իրավունքների խորհուրդ, 2022թ.): GREVIO-ն նշել է, որ կին քաղաքական գործիչները, լրագրողները, իրավապաշտպանները և ակտիվիստները հատկապես հաճախ են ենթարկվում «բռնության դրսևորումների, որոնք քրեականացված չեն [բայց] կարող են վերածվել հոգեբանական բռնության [որը սահմանված է Ստամբուլյան կոնվենցիայով], երբ համակցված են ամբոխի մտածելակերպի և համացանցի միջոցով օժանդակվող կրկնությունների հետ. ծաղրող մեկնաբանությունը կարող է վերածվել կիբերբուլինգի, եթե այն կրկնվում է կամ տարածվում է մեծ թվով մարդկանց կողմից» (GREVIO, 2021թ.): Առցանց բռնության հետ կապված նմանատիպ հիմնախնդիր նշել է նաև Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը՝ ընտրություններում կին թեկնածուների նկատմամբ ագրեսիվ սեքսիստական լեզվի, գենդերային կարծրատիպերի և սեքսուալ ակնարկների առնչությամբ, որոնց նպատակն է զսպել կանանց հանրային մասնակցության պատրաստակամությունը:

Գ. Կանանց նկատմամբ թվային բռնությունը կանխելու անհրաժեշտությունը

EDVAW հարթակի բոլոր անդամները գիտակցում են կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և անցանց բռնությունները կանխելու նպատակով կանանց և նրանց դերի նկատմամբ բացասական վերաբերմունքը փոխելու անհրաժեշտությունը: Համապատասխանաբար, նրանք նպաստում են իրազեկվածության բարձրացմանը, կրթությանը և վերապատրաստմանը բռնության կանխարգելման նպատակով: Օրինակ՝ Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը մասնակցում է իրազեկման բարձրացման մի շարք միջոցա-

ռումների՝ միաժամանակ կոչ անելով պետություններին իրականացնել այդ ուղղությամբ կրթական ծրագրեր (Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող, 2022թ.): Նմանապես, GREVIO-ն և MESECVI-ն կոչ են անում իրականացնել իրազեկման արշավներ՝ կանխելու կանանց նկատմամբ թվային բռնությունը: (ONU Mujeres and OEA/CIM/MESECVI, 2022թ., GREVIO, 2021թ.): Քանի որ կանանց նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է վաղ տարիքից, IACHR-ի զեկուցողը և GREVIO-ն շեշտում են գենդերային հավասարությունը խթանելու, ինչպես նաև թվային գրագիտության զարգացմանն ուղղված կրթական ծրագրերի կարևորությունը (GREVIO, 2021թ., IACHR, 2019թ.):

Տուժողների և իրավախախտների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումը (իրավապահ մարմինների աշխատակիցների, դատական, առողջապահական և սոցիալական ոլորտների աշխատողների) թույլ է տալիս ուշադրությունը կենտրոնացնել հետագա կանխարգելիչ գործողությունների վրա՝ ապահովելով թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնության, ինչպես նաև տուժողների ինտերսեկցիոնալ կարիքների ավելի լավ ըմբռնում: IACHR-ի զեկուցողը, GREVIO-ն, MESECVI-ն և Աֆրիկայում կանանց իրավունքների հատուկ զեկուցողը խորհուրդ են տալիս վերապատրաստումների ձևով կանխարգելիչ քայլեր ձեռնարկել (ONU Mujeres and OEA/CIM/MESECVI, 2022; African Commission, 2022b; GREVIO, 2021թ., IACHR, 2018,IACHR, 2019թ.): GREVIO-ի առաջին Ընդհանուր հանձնարարականը հստակորեն պահանջում է «պարտադիր և շարունակական կարողությունների զարգացում, կրթություն և վերապատրաստում բոլոր համապատասխան մասնագետների համար […], տրամադրելով նրանց գիտելիք կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ, տուժած կանանց և աղջիկներին առանց երկրորդային զոհականացման և կրկնակի տրավմա պատճառելու արձագանքելու և, անհրաժեշտության դեպքում, տեղեկատվություն առկա իրավական կարգավորումների և միջազգային համագործակցության մեխանիզմների մասին, որոնք վերաբերում են կանանց նկատմամբ թվային բռնությանը, ինչպես նաև էլեկտրոնային ապացույցների հավաքագրմանը և պահպանմանը (GREVIO, 2021թ.):

Այս համատեքստում, MESECVI-ի ԱՊԿ-ի ահաբեկչության դեմ պայքարի միջամերիկյան կոմիտեի (CICTE-OAS) և Կանանց միջամերիկյան հանձնաժողովի կիբերանվտանգության ծրագրի հետ համատեղ մշակել է անվճար առցանց հանրամատչելի դասընթաց «Մեր ցանցերը, մեր անվտանգությունը», որը նվիրված է թվային անվտանգության գենդերային հիմնահարցերին և նախատեսված է տարբեր կրթական մակարդակ ունեցող կանանց համար, ովքեր ձգտում են խորացնել իրենց գիտելիքը թվային անվտանգության, թվային իրավունքների և առցանց բռնության մասին, ինչպես նաև պետական պաշտոնյաների, ուսուցիչների և առցանց ու անցանց գենդերային բռնությանը ենթարկված կանանց ուղղորդող կամ աջակցող կազմակերպությունների անդամների համար[9]:

D. Կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնության քրեականացումը

Կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնությանն ուղղված հատուկ իրավական բարեփոխումների անհրաժեշտության գիտակցումը EDVAW հարթակի տարբեր անդամների մեկ այլ ընդհանրությունն է: Առանձնահատուկ շեշտադրվում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հարցերի կարգավորման անհրաժեշտությունը քրեական օրենսդրությունում, ընդ որում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել է, որ քրեականացումը

[9] Դասընթացը հասանելի է՝ https://moocs.educoas.org/course/index.php?categoryid=8:

անհրաժեշտ է, որպեսզի տուժողները կարողանան «պաշտպանել իրենց անձնական կյանքի և արժանապատվության իրավունքները» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b): ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը շեշտել է, որ «պետությունները պետք է ընդունեն կամ հարմարեցնեն (ըստ իրավիճակի) քրեական և քաղաքացիական հայց ներկայացնելու ընթացակարգերը՝ բռնարարներին պատասխանատվության ենթարկելու համար» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b) և, մասնավորապես, «հստակորեն արգելեն և քրեականացնեն առցանց բռնությունը կանանց նկատմամբ, մասնավորապես՝ առանց անձի համաձայնության նրա ինտիմ բնույթի նկարների տարածումը, առցանց հետապնդումը և հետամտումը» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b): Այս հանձնարարականը կրկնվում է ՄԱԿ-ի աշխատանքային խմբի կողմից (Մարդու իրավունքների խորհուրդ, 2020b): CEDAW-ն վկայակոչում է կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու համար բոլոր համապատասխան միջոցները (ներառյալ օրենսդրությունը) կիրառելու ընդհանուր պարտավորությունը (CEDAW, 2017թ.):

Տարածաշրջանային մակարդակում MESECVI-ն նշում է, որ քրեական պատժամիջոցները շատ կարևոր են «բռնարարների անպատժելիության մշակույթի դեմ պայքարելու համար՝ կիրառելով հանցանքին համապատասխան, անհրաժեշտ և համաչափ պատժամիջոցներ» (ONU Mujeres and OEA/CIM/MESECVI, 2022թ.): GREVIO-ն նշում է, որ կանանց նկատմամբ թվային բռնության շատ ձևեր համարվում են դիտավորությամբ կատարված արարք, որը Ստամբուլյան կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է քրեականացնեն՝ որպես առցանց կամ թվային միջոցներով կատարվող հոգեբանական բռնություն, հետապնդում կամ սեռական ոտնձգություն: Օրինակ՝ առցանց սեռական հետապնդում է հանդիսանում առցանց կամ թվային միջոցներով կատարվող հետևյալ վարքագիծը. 1) առանց անձի համաձայնության նրա լուսանկարների կամ տեսանյութերի տարածում, 2) առանց անձի համաձայնության նրա ինտիմ բնույթի լուսանկարների կամ տեսանյութերի նկարահանում, պատրաստում կամ ձեռքբերում, 3) շահագործում, հարկադրանք և սպառնալիք, 4) սեռականացված բուլինգ, և 5) կիբերֆլեշինգ[10]: GREVIO-ն խորհուրդ է տալիս մասնակից պետություններին վերանայել «գործող ցանկացած համապատասխան օրենսդրություն և անհրաժեշտության դեպքում ընդունել նոր օրենսդրություն՝ կանանց նկատմամբ թվային բռնությունը կանխելու, հետապնդելու, ինչպես նաև դրանից պաշտպանելու ուղղությամբ» (GREVIO, 2021թ.): Այն նաև սահմանում է, որ թվային հարթակներում հետամտումը ներառում է «սպառնալիքներ, հեղինակազրկում, տուժողի մասին անձնական տեղեկատվության մոնիթորինգ և հավաքում, ինքնության գողություն, սեռավարություն, տուժողի նմանակում և հանցակիցների հետ միասին հետապնդում՝ տուժողին մեկուսացնելու նպատակով» (GREVIO, 2021թ.):

Մարդու և մարդկանց իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը մտահոգություն է հայտնում, որ «կանանց թվային բռնությունից պաշտպանության հարցում իրավական դաշտում դեռևս առկա են բացեր» (Աֆրիկյան հանձնաժողով, 2022b) և, համապատասխանաբար, կոչ է անում պետություններին ընդունել անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներ ներպետական մակարդակում և հատկապես «քրեականացնել թվային բռնությունը»: Այն նաև ավելի մեծ համագործակցություն է պահանջում իրավապահ մարմինների և ծառայություններ մատուցողների միջև՝ իրավախախտներին բացահայտելու համար՝ հիմնարար իրավունքների և տվյալների պաշտպանության օրենքների համատեքստում: Նմանապես, IACHR Կանանց իրավունքների զեկուցողն առաջարկում է ընդունել կարգավորող և քրեական հատուկ շրջանակ՝ արգելելու տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գենդերային բռնության տարբեր ձևերը (IACHR, 2018թ.), և հնարավորություն տալու ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը համացանցում (IACHR, 2019թ.):

[10] Կիբերֆլեշինգը հանցագործության տեսակ է, որը ենթադրում է անպարկեշտ նկարների առցանց ուղարկում:

Ե. Համացանցային հարթակների կարևորությունը կանանց նկատմամբ թվային բռնության կանխարգելման և սահմանափակման գործում

Կանանց նկատմամբ թվային բռնությունն առավել հաճախ իրականացվում է մասնավոր սեփականություն հանդիսացող համացանցային հարթակների միջոցով, ներառյալ սոցիալական մեդիա ընկերություններ, բջջային հեռախոսահաղորդակցման տեխնոլոգիաներ, միկրոբլոգեր և հաղորդագրությունների կամ ծանոթությունների հավելվածներ, ինչպես նաև որոշ պոռնոգրաֆիկ կայքեր: Բացի այդ, գլոբալ գիտելիքը համախմբող և ինդեքսավորող, ինչպես նաև առցանց երևացող տեղեկատվությունը կառավարող ալգորիթմներ նախագծող հարթակների մեծամասնությունը մասնավոր ընկերություններ են: Ուստի, նման համացանցային ընկերությունների հետ համագործակցությունը կարևորագույն նշանակություն ունի կանանց նկատմամբ թվային բռնության կանխարգելման և բոլոր տեսակի վնասների կրճատման համար:

Թեև ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշում է, որ համացանցային հարթակներն ունեն մարդու իրավունքների պարտավորություններ, սակայն նման պարտավորությունները մարդու իրավունքների միջազգային շրջանակներում դեռևս ամբողջությամբ հաշվի չեն առնվել (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b): Ավելին, համացանցային միջնորդների ուսումնասիրություններում քիչ ուշադրություն է դարձվում կանանց վրա դրանց քաղաքականությունների ու գործելակերպի ազդեցության հարցին (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b): Համապատասխանաբար, EDVAW հարթակի անդամներն ընդգծել են համացանցային միջնորդների դերը և նախանշել են մի շարք ուղիներ, որոնց միջոցով կարելի է ավելի ակտիվ գործողություններ ձեռնարկել՝ կանխելու և մեղմելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վնասները:

Թիվ 35 Ընդհանուր հանձնարարականում CEDAW-ը առաջադրել է մասնակից պետություններին խրախուսել մասնավոր հատվածը, ներառյալ բիզնեսներին և անդրազգային կորպորացիաներին, ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները խտրականության բոլոր ձևերը, ներառյալ կանանց նկատմամբ բռնությունը, վերացնելու համար: Որոշ չափով, EDVAW հարթակի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ մասնավոր հատվածը կենսական դեր է խաղում ինչպես մարդու իրավունքների նոր մարտահրավերների աղբյուր հանդիսանալու, այնպես էլ հնարավոր լուծումներ ապահովելու գործում: Այս առումով, GREVIO-ն կոչ է անում մասնակից պետություններին համագործակցել ՏՀՏ ընկերությունների հետ՝ իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու կանանց նկատմամբ բռնության համար, և առաջարկում է միջոցներ, ինչպիսիք են բողոքարկման արդյունավետ մեխանիզմները, դրոշակավորման[11] մեխանիզմները, ինչպես նաև վնասակար բովանդակությունը հեռացնելը, մոդերատորական գործելակերպը և տեխնոլոգիաների գենդերազգայուն նախագծումը (GREVIO, 2021թ.): GREVIO-ն Բելգիայի, Շվեդիայի և Գերմանիայի վերաբերյալ իր նախնական գնահատող զեկույցներում կենտրոնացել է նաև կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում ՏՀՏ ոլորտի և առցանց ծառայությունների դերի վրա:

ՄԱԿ-ի աշխատանքային խումբը հավելել է, որ մասնավոր ընկերությունները պետք է ստեղ-

[11] Դրոշակավորում՝ առցանց սոցիալական մեդիա հարթակներում կամ ընկերություններում վնասակար կամ վիրավորական բովանդակությամբ նյութերի մասին զեկուցելու սոցիոտեխնոլոգիական մեխանիզմ:

ծեն «սեռի և տարիքի հետ կապված առցանց խտրականության և բռնության դեմ պայքարելու համար արդյունավետ կարգավորումներ, այդ թվում՝ բովանդակության վերահսկման և հաշվետվության մեխանիզմներ, իրավախախտներին պատժելու և հուսալի տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգեր» (Մարդու իրավունքների խորհուրդ, 2022թ.): Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը կոչ է արել «արդյունավետ համագործակցություն ապահովել իրավապահ մարմինների և ծառայություններ մատուցողների միջև իրավախախտներին բացահայտելու և ապացույցներ հավաքելու հարցում, որը պետք է լիովին համապատասխանի հիմնարար իրավունքներին և ազատություններին և տվյալների պաշտպանության կանոններին» (Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող, 2022թ.):

Բացի ապացույցներ հավաքելու, իրազեկության բարձրացման և համացանցում գաղտնիության նկատմամբ հարգանքի երաշխավորման հարցերում ՏՀՏ ընկերությունների առանցքային դերը ճանաչելուց, MESECVI-ն ընդգծել է, որ ՏՀՏ ընկերությունները ունեն մարդու իրավունքների գծով հատուկ պարտականություններ, նկատի ունենալով, որ նրանք պետք է պաշտպանեն կանանց իրավունքները համացանցում և արձագանքեն ցանկացած խախտման: Դա կարող է իրականացվել վարքագծի կանոնների և բողոքների մեխանիզմների մշակման միջոցով (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.): Այս առումով, GREVIO-ի առաջին Ընդհանուր հանձնարարականը մատնանշում է Մասնակից պետությունների պարտավորությունը՝ խրախուսելու մասնավոր և ՏՀՏ հատվածին մշակել և հաստատել «մարդու իրավունքների դրույթներին համապատասխան ուղեցույցներ և ինքնակարգավորման չափանիշներ՝ կանխելու և պայքարելու կանանց նկատմամբ թվային բռնության դեմ» (GREVIO, 2021թ.):

IV. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի EDVAW հարթակի մեխանիզմների կիրարկման լավագույն փորձը

EDVAW հարթակում ներառված կանանց իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները առանցքային նշանակություն ունեն կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ թվային բռնության, դեմ պայքարի բոլոր մակարդակներում առաջընթացը և մարտահրավերներն արձանագրելու գործում: Այս բաժնում ներկայացվում է EDVAW հարթակի անդամների կողմից՝ իրենց մոնիթորինգային գործունեության ընթացքում առանձնացված կանանց նկատմամբ թվային բռնության տարբեր ձևերին արձագանքելու և կանխելու ազգային լավագույն փորձի ոչ սպառիչ ցանկը:

Ա. Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեականացում

Վերջին տարիներին շատ երկրներ ընդունել են նոր օրենքներ կամ վերանայել են գործող օրենքները՝ երաշխավորելու, որ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը, մասնավորապես՝ պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը, ենթակա է քրեական սանկցիավորման: Օրինակ, MESECVI-ն նշել է, որ Նիկարագուայում, 2020 թվականին, ՏՀՏ-ի միջոցով օժանդակվող սպառնալիքներն ու հետապնդումը քրեականացվել են «Կիբերհանցագործությունների մասին» հատուկ օրենքով, ընդ որում առանց անձի համաձայնություն նրա ինտիմ բնույթի պատկերները տարածելը և դոքսինգը քրեական պատասխանատվության ենթարկելու համար այժմ գործադրվում է ընդհանուր օրենքը (ONU Mujeres and OEA/CIM/MESECVI, 2022թ.): Ավելին, MESECVI-ն, CEDAW-ն և ՄԱԿ-ի հատուկ զեկուցողներն ազգային զեկույցներում նշել են, որ մի շարք այլ երկրներում, այդ թվում՝ Ավստրալիայում, Մեքսիկայում, Մարոկկոյում և Շվեդիայում, սահմանվել են նոր օրենքներ, որոնք քրեականացնում են կիբերհետապնդումը, առանց անձի համաձայնության նրա ինտիմ բնույթի պատկերների պատրաստումը և/կամ տարածումը և սեռավարությունը:

Աֆրիկյան հանձնաժողովը, հատուկ զեկուցողի մասնակցությամբ, նաև նշել է, որ որոշ աֆրիկյան պետություններ ներկայացրել են կիբերհանցագործությունների վերաբերյալ տարբեր օրենքներ, այդ թվում՝ Քենիան, Տանզանիան, Էսվատինին, Բոտսվանան, Հարավային Աֆրիկան և Մավրիկիոսը, և այդ օրենքների մի մասը պարունակում է կանանց առցանց բռնությունից պաշտպանության հատուկ դրույթներ (Աֆրիկյան հանձնաժողով, 2022a): Բացի այդ, GREVIO-ի մի քանի նախնական գնահատման զեկույցներ, ինչպիսիք են Բելգիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Սլովենիայի և Իսպանիայի վերաբերյալ զեկույցները, ողջունում են նոր օրենքների ընդունումը և գործող օրենքների դրույթների վերանայումը, որի շնորհիվ բռնության տեխնոլոգիապես օժանդակվող ձևերը՝ հետամտումը և հետապնդումը այժմ քրեականացվում են, ինչպես նաև հատուկ դրույթներ են սահմանվում առանց անձի համաձայնության նրա պատկերները տարածելու վերաբերյալ:

Բ. Թվային բռնությունը որպես ընտանեկան բռնության տեսակ ճանաչումը

Ընտանեկան բռնության հարցում իրավական բարեփոխումները գնալով ավելի հաճախ են պնդում, որ ՏՀՏ-ները օժանդակում են այդ տեսակի հանցագործությունների աճին: Շատ երկրներում քրեական օրենսդրությունը ընդլայնվել է, տարածվելով ընտանեկան բռնության

թվային հարթության վրա: Բրազիլիայում, օրինակ, MESECVI-ն նշել է, որ նոր օրենքները թույլ են տալիս պատկերի վրա հիմնված սեռական բռնությունից տուժողին պահանջել հրատապ պաշտպանական միջոցներ, մասնավորապես նախկին կամ ներկայիս զուգընկերոջ կողմից առանց նրա համաձայնության արված ինտիմ բնույթի լուսանկարների, տեսանյութերի ստեղծման և պահպանման դեպքում: Այդ հայցերը քննվում են ընտանեկան բռնության մասնագիտացված դատարանների կողմից (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

Մեկ այլ օրինակ կարելի է գտնել Ռումինիայում, որտեղ GREVIO-ի նախնական գնահատման զեկույցում նշվում է, որ ընտանեկան բռնության մասին օրենքի վերջին փոփոխությունը ներառում է կիբերբռնությունը, որը համապարփակորեն սահմանվում է որպես «առցանց հետապնդում, գենդերային հիմքով ատելություն հրահրող առցանց հաղորդագրություններ, առցանց հետամտում, առցանց սպառնալիքներ, տեղեկատվության և ինտիմ գրաֆիկական բովանդակության առանց անձի համաձայնության հրապարակում, հաղորդակցությունների և անձնական տվյալների գաղտնալսում և տեղեկատվության և կապի տեխնոլոգիաների ապօրինի օգտագործման ցանկացած այլ ձև՝ համակարգիչների, սմարթֆոնների կամ այլ նմանատիպ սարքերի միջոցով, որոնք օգտագործում են հեռահաղորդակցություն կամ կարող են միանալ համացանցին, օգտագործել սոցիալական հարթակները կամ էլեկտրոնային փոստի հարթակները՝ տուժողին ամաչեցնելու, նվաստացնելու, վախեցնելու, սպառնալու կամ լռեցնելու նպատակով»:

Գ. Թվային բռնության ենթարկված անձանց համար արդարադատության և աջակցության հասանելիությունը

Մի շարք երկրների իրավապահ մարմիններում ներդրվում են կանանց նկատմամբ առցանց բռնության մասնագիտական ստորաբաժանումներ, նպատակ ունենալով ապահովելու ոստիկանության արդյունավետ և պատասխանատու հետաքննությունը և աջակցությունը տուժողներին: MESECVI-ն նշել է, որ նման մասնագիտացված իրավապահ ստորաբաժանումները գնալով ավելի են շատանում Լատինական Ամերիկայում: Օրինակ, Մեքսիկայի դաշնային ոստիկանությունն ունի դատաբժշկական բաժին, որը պատասխանատու է կիբերհանցագործությունների, այդ թվում՝ կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքերի հետաքննության համար: Կոլումբիայի ազգային ոստիկանությունն ունի նմանատիպ կիբերնետիկ կենտրոն, իսկ Բրազիլիայի դաշնային ոստիկանությունը կիբերհանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ (OAS/CICTE և OAS/CIM/MESECVI, 2022թ.):

Ինչ վերաբերում է Եվրոպային՝ GREVIO-ի Ռումինիայի վերաբերյալ նախնական գնահատման զեկույցում նշվում է, որ սեռական բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ներկայիս ազգային ռազմավարության ներքո ստեղծվել են մասնագիտացված ստորաբաժանումներ՝ ինչպես իրավապահ մարմիններում, այնպես էլ պետական դատախազությունում: Սլովենիայում GREVIO-ի նախնական գնահատման զեկույցը ողջունել է վերջին նախաձեռնությունը, որը հատուկ ուշադրություն է դարձրել կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ոլորտին: Իրավապահների և դատավորների համար կազմակերպվել են սեմինարներ և դասընթացներ՝ նպատակ ունենալով բարելավել նրանց կարողությունները՝ հետաքննելու և քրեորեն հետապնդելու աղջիկների և կանանց նկատմամբ թվային բռնությունը: Կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հարցում իրավապահ մարմինների և դատական համակարգի դերը մանրամասն

ներկայացնող ձեռնարկը հաստատվել և բաժանվել է Սլովենիայի բոլոր ոստիկանական բաժանմունքներին և տնօրինություններին, դատախազների գրասենյակներին և դատարաններին:

Տուժողներին օգնություն և աջակցություն ցուցաբերելը արդյունավետ և արձագանքող օրենսդրական դաշտ ստեղծելուց զատ նախատեսում է խորհրդատվական, իրավական, ապաստարանային և այլ ծառայություններ: Որպես խոստումնալից պրակտիկա՝ Պերուի կանանց և խոցելի բնակչության նախարարությունը ստեղծել է թվային հարթակ, որտեղ տուժողները կարող են հայտնել կիբերհետապնդումների մասին (OAS/CICTE և OAS/CIM/MESECVI, 2022թ.): Տարբեր երկրներում գործում են թեժ գծեր, որոնք հաղորդումներ են ստանում գենդերային բռնության դեպքերի, ներառյալ թվային բռնության մասին և աջակցություն են տրամադրում տուժողներին, այդ թվում՝ Արգենտինայում և Բելիզում, որտեղ գործարկվել է նաև տեքստային հաղորդագրությունների ալիք: MESECVI-ն նաև կարևորել է SS և կիբերանվտանգության փորձագետների կողմից տուժողների աջակցության կենտրոններում և ապաստարաններում խորհրդատվական ծառայություններ և օգնություն տրամադրելը, ինչը հնարավորություն է տալիս կանանց և աղջիկներին գնահատել իրենց թվային անձեռնմխելիությանը հնարավոր սպառնալիքները (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը 2018 թվականին նշել է աջակցության թեժ գծերի ստեղծման անհրաժեշտության մասին՝ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող գենդերային բռնության տուժողներին օգնելու համար և ուշադրություն է հրավիրել հաջողված պրակտիկաների վրա, ինչպիսիք են Access Now Digital Security Helpline-ը (Անմիջական թվային անվտանգության օգնության գիծ), որն օգնում է բռնության վտանգի տակ գտնվող կանանց բարելավելու իրենց թվային անվտանգությունը և անհետաձգելի օգնություն է տրամադրում հարձակման ենթարկված կանանց: Այս շուրջօրյա ծառայությունը, որը հասանելի է ութ լեզուներով, նպատակ ունի երկու ժամվա ընթացքում պատասխանել բոլոր ստացվող հարցումներին (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b): Մեկ այլ օրինակ է Թվային իրավունքների հիմնադրամը Պակիստանում, որն արձագանքում է առցանց հետապնդումներին հետազոտության, շահապաշտպանության և ծառայությունների մատուցման միջոցով: Նրա Կիբերհետապնդումների օգնության գիծը տարածաշրջանի առաջին հատուկ օգնության գիծն է, որը նախատեսված է առցանց հետապնդումների և բռնության դեպքերի համար (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b):

Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը հրապարակել է Աֆրիկայում սեռական բռնության և դրա հետևանքների դեմ պայքարի ուղեցույցներ, որոնք առաջարկում են մի համակարգ, որի ներքո կանանց նկատմամբ սեռական բռնության դեպքերը հետաքննվում են և իրավախախտները քրեական պատասխանատվության են ենթարկվում, իսկ տուժողները իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ունեն (Աֆրիկյան հանձնաժողով, 2017թ.): Այս համակարգը ապահովում է նաև արդարադատության մատչելիություն առցանց բռնության ենթարկված կանանց համար:

Դ. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ կրթությունը և իրազեկումը

EDVAW հարթակի անդամները առանձնացրել են օրինակելի հանրային արշավներ և կրթական ծրագրեր, որոնց նպատակն է բարձրացնել իրազեկությունը կանանց նկատմամբ թվային բռնության բնույթի և ազդեցության մասին: Պերուում Ընտանեկան և սեռական բռնության

դեմ ազգային ծրագրի ներքո ստեղծվեց «Մենք պաշտպանվում ենք վիրտուալ հետապնդումից» հարթակը, որի նպատակն է բարձրացնել առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության մասին իրազեկվածությունը: Այն ներառում է «վիրտուալ հետապնդման թեստը», որն օգնում է պարզել՝ արդյոք օգտատերը ենթարկվել է թվային բռնության և ապահովում է բողոքների գրանցման ընթացակարգ (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.): Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ Պերուի կանանց և խոցելի բնակչության նախարարությունը նաև մեկնարկել է #ԱռցանցևԱնվտանգ (#ConectadasYSeguras) արշավը, որի նպատակն է բարձրացնել հանրային իրազեկվածությունը առցանց հետապնդումների ազդեցության մասին:

Մեկ այլ օրինակելի պրակտիկա գոյություն ունի Սլովենիայում, որտեղ GREVIO-ի նախնական գնահատման զեկույցում նշվում է, որ տարբեր նախարարություններ համագործակցել են դպրոցներում հատուկ ուսումնական դասընթաց ներդնելու համար, որը նպատակ ունի ձևավորել առցանց գենդերային բռնության նկատմամբ սոցիալական անհանդուրժողականություն: Համանման դասընթացների մասնակցել են ուսուցիչները, դպրոցական խորհրդատուները, սոցիալական աշխատողները և երեխաների հետ աշխատող այլ մասնագետները, հատուկ վերապատրաստում էր իրականացվել նաև իրավապահ մարմինների և դատական համակարգի համար:

Ե. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրումը

Տվյալների ճշգրիտ հավաքագրումը չափազանց կարևոր է կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության նշանակությունը, ազդեցությունը, ծավալները և բնույթը գնահատելու, արդյունավետ օրենսդրության և քաղաքականության բարեփոխումների ներդրման համար: Այսպես, CEDAW թիվ 35 Գլխավոր հանձնարարականը Մասնակից պետություններից պահանջում է «ստեղծել կանանց նկատմամբ գենդերային բռնության ներառյալ՝ տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերի վերաբերյալ բողոքների մասին վիճակագրական տվյալները կանոնավոր կերպով հավաքելու, վերլուծելու և հրապարակելու համակարգ» (CEDAW, 2017թ.): Նմանապես, GREVIO-ի առաջին Ընդհանուր հանձնարարականը պահանջում է, որ մասնակից պետությունները «ստեղծեն համակարգ, որը համակարգված կերպով հավաքում և վերլուծում է կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ դիզագրեգացված[12] տվյալներ, ներառյալ բողոքների, դեպքերի և դատապարտումների, ինչպես նաև քաղաքացիական արդարադատության միջոցառումների վերաբերյալ տվյալներ, օրինակ՝ խափանման միջոցների կիրառման վերաբերյալ որոշումները» (GREVIO, 2021թ.): Այն ավելացնում է, որ բոլոր տվյալները պետք է հավաքվեն և վերլուծվեն հաշվի առնելով ինտերսեկցիոնալությունը և դիզագրեգացվեն ըստ բռնության տեսակի, տարիքի, բռնարարի և տուժողի միջև փոխհարաբերությունների, հնարավոր ծանրացուցիչ հանգամանքների և տարբերակման այլ հատկանիշների: Այն նաև ընդգծում է «ինքնասպանությունների կամ ինքնասպանության փորձերի և կանանց ու նրանց երեխաների գենդերային հիմքով սպանությունների վերաբերյալ տվյալներ հավաքելու անհրաժեշտությունը, ներառյալ տեղեկություններ հետապնդումների պատմության մասին, այդ թվում՝ աշխատավայրում, թվային ոլորտում հետամտման կամ հոգեբանական բռնության մասին» (GREVIO, 2021, կետ. 57(ե)):

[12] Տվյալների դիզագրեգացված հավաքագրումը հնարավորություն է տալիս բաժանել առկա տեղեկատվությունը փոքր վերլուծական միավորների՝ հիմքում ընկած միտումներն ու օրինաչափությունները պարզաբանելու համար:

Որպես խոստումնալից նախաձեռնություն, արգենտինական «Հաղորդակցություն հանուն հավասարության» և կոլումբիական «Սենտիդո» ՀԿ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ միասին հավաքել և ուսումնասիրել են Արգենտինայում, Կոլումբիայում, Նիկարագուայում, Մեքսիկայում, Պարագվայում կին լրագրողների նկատմամբ թվային բռնության վերաբերյալ տվյալներ (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

Զ. Համացանցային հարթակները, այդ թվում՝ սոցիալական մեդիա ընկերությունները, պատասխանատվության ենթարկելը

Հաշվի առնելով համացանցային ընկերությունների կարողությունը՝ նպաստելու և ուժեղացնելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը, ինչպես նաև վնասների նվազեցման և մեղմացման գործում նրանց առանցքային դերը, քայլեր են ձեռնարկվում համացանցային հարթակների, այդ թվում՝ սոցիալական մեդիա ընկերությունների գործունեությունն ավելի հստակ կարգավորելու ուղղությամբ: Բրազիլիայում, օրինակ, կանոնակարգված է համացանցային հարթակների պատասխանատվությունը երրորդ կողմի տարածած բովանդակության համար, ներառյալ՝ առանց անձի համաձայնության տեղադրված ինտիմ բնույթի նյութերը ողջամիտ ժամկետում և առանց հեռացման մասին դատական որոշման հեռացման պահանջը (ONU Mujeres and OEA/CIM/MESECVI, 2022): Նմանապես, Ուրուգվայում համացանցային հարթակները քրեական պատասխանատվություն են կրում, եթե դրանք արագորեն չեն հեռացնում առանց անձի համաձայնության տեղադրված բովանդակությունը (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը բազմաթիվ ազգային զեկույցներում ընդգծել է մասնավոր հատվածի կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ կանոնակարգումների ուսումնասիրության կարևորությունը: Օրինակ՝ 2019 թվականին Նեպալի վերաբերյալ իր ազգային զեկույցում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը կառավարությանը կոչ արեց «վերանայել բարեվարքության և էթիկայի ազգային կանոնների նախագիծը, գաղտնիության կանոնները և առցանց մեդիայի վերաբերյալ հրահանգների նախագիծը, ու լրամշակել էլեկտրոնային գործարքների մասին օրենքը և Ազգային հեռարձակման կանոնակարգերը՝ խորհրդակցելով Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի և քաղաքացիական հասարակության հետ, ապահովելով, որ դրանք չսահմանափակեն կանանց իրավունքների վրա աշխատող ՀԿ ներկայացուցիչների գործունեությունը և արտահայտվելու ազատությունը»:

GREVIO-ի Գերմանիայի վերաբերյալ նախնական գնահատման զեկույցը ողջունում է երկրի ծրագրերը բարեփոխելու Ցանցում իրավունքների պաշտպանության մասին օրենքը՝ պարտավորեցնելով հարթակներին Դաշնային քրեական գրասենյակին հաղորդել որոշակի անօրինական բովանդակության մասին: Այն նաև հետաքրքրությամբ նշել է Քյոլնի հանրային դատախազության ծառայությունում հիմնված Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիայի կիբերհանցագործությունների դեմ պայքարի կենտրոնական գրասենյակի պրակտիկան, որը Պետական մեդիա մարմնի հետ համատեղ իրականացրել է «Հետևել՝ ուղղակի ջնջելու փոխարեն» նախագիծը: Այս նախագիծը կենտրոնանում է խոսքի ազատության պաշտպանության վրա՝ ապահովելով միայն հանցավոր բովանդակության հեռացումը և ոչ անընդունելի համարվող բոլոր նյութերը: Բելգիայում GREVIO-ն ողջունեց 2020 թվականին ընդունված իրավական բարեփոխումը, որը քրեականացնում է առանց համաձայնության սեռական պատկերների և ձայնագրությունների տարածումը, միաժամանակ նախատեսում է նման պատկերների արգելափակման և հեռացման ընթացակարգ, ներառյալ տուգանքներ չհամագործակցող համացանցային հարթակների համար:

Է. Կանանց նկատմամբ թվային բռնությանը հակազդելու բազմագերատեսչական մոտեցումը

Բազմագերատեսչական մոտեցումը համապարփակ արձագանք է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վնասների կանխարգելման և մեղմման ու տուժողներին փոխհատուցում տրամադրելու համար: Նման օրինակ կարելի է գտնել Ավստրալիայում, որտեղ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը կարևորել է կառավարական գործակալություն հանդիսացող eSafety հանձնաժողովի աշխատանքը, որը պատասխանատու է առցանց բռնության, ներառյալ պատկերի հիմքով բռնության դեմ պայքարի համար (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018a): Էլեկտրոնային անվտանգության eSafety հանձնաժողովը կազմված է իրավաբաններից, մանկավարժներից, թվային ոլորտի մասնագետներից և քաղաքականության վերլուծաբաններից, որոնք համագործակցում են կրթական և իրազեկման ծրագրերի մշակման, ազգային մակարդակում շահապաշտպանության, ինչպես նաև առցանց վիրավորական բովանդակության հեռացման հարցերում:

V. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարում EDVAW հարթակի մեխանիզմների կողմից բացահայտված մարտահրավերները

Չնայած կանանց նկատմամբ թվային բռնության դեմ ազգային կառավարությունների կողմից ձեռնարկված վերը նշված խոստումնալից քայլերի, EDVAW հարթակի անդամները մի շարք բացեր են հայտնաբերել բռնության դեմ պայքարի ազգային գործողությունների բոլոր մակարդակներում: Այս բաժինը ներկայացնում է EDVAW հարթակի անդամների կողմից մոնիթորինգային գործունեության ընթացքում բացահայտված խնդիրների ոչ սպառիչ ցանկը:

Ա. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ ընդհանուր տերմինաբանության բացակայությունը

Ազգային մակարդակում ընդհանուր տերմինաբանության բացակայությունը հաճախ դժվարացնում է կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բնույթի, նշանակության, տարածվածության և ազդեցության համեմատությունն ու գնահատումը: MESECVI-ն ընդգծել է, թե ինչպես է համաձայնեցված տերմինաբանության և տեղեկատվության բացակայությունը հանգեցրել հակասող եզրույթների օգտագործման՝ սահմանափակելով կանանց և աղջիկների համար իրենց խնդիրները բարձրաձայնելու հնարավորությունը և առաջացնելով իշխանությունների ոչ համարժեք արձագանքը: Այդուհանդերձ, MESECVI-ն նշել է, որ շարունակական տեխնասոցիալական փոփոխությունների պատճառով այս տերմինաբանությունը պետք է լինի դինամիկ, ընդ որում կարևոր է խուսափել սահմանումների կարծրացումից և առցանց/անցանց երկատվածությունից (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

Բ. Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալների սակավությունը

Կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ տվյալների բացակայությունը ավելի է սրվում այն պատճառով, որ առկա տվյալները հաճախ չեն դասակարգվում ըստ սեռի, տարիքի, տուժողի և բռնարարի փոխհարաբերությունների, հաշմանդամության կամ այլ համապատասխան գործոնների: Այս բացը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով, այդ թվում՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ազգային վիճակագրությունում թվային հարթության բացակայությամբ. համակարգչային և կիբերհանցագործությունների դեպքերի վերաբերյալ ըստ սեռի տարանջատված վիճակագրության բացակայությամբ և թվային բռնության վերաբերյալ բողոքների պաշտոնական գրանցման բացակայությամբ: EDVAW հարթակի անդամները գտնում են, որ պետք է քայլեր ձեռնարկվեն՝ հավաքագրելու համապարփակ տվյալներ՝ ըստ սեռի և այլ ինտերսեկցիոնալ բնութագրիչների: Օրինակ, Գերմանիայի վերաբերյալ իր նախնական գնահատման զեկույցում GREVIO-ն ափսոսանք է հայտնում, որ ոչ մի քայլ չի ձեռնարկվել կանանց նկատմամբ թվային բռնության տարածվածությունը գնահատելու համար: MESECVI-ն ավելացրել է, որ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ տվյալների բացակայության ընդհանուր հիմնախնդրի հետ մեկտեղ, համացանցային միջնորդ ընկերությունների ոչ բավարար թափանցիկությունը, որոնք հազվադեպ են կիսում դիզագրեգացված տվյալներ, էլ ավելի է դժվարացնում ինչպես բռնության իրական ծավալների վերաբերյալ պատկերացումը, այնպես էլ դրա նվազեցման և կանխար-

գելման համար նպատակային միջոցառումներ առաջարկելու հնարավորությունները (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.):

Գ. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի վերաբերյալ ուսուցման բացերը

Նույնիսկ այն երկրներում, որտեղ կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը քրեականացվել է, իրազեկման միջոցառումները, իրավական և քրեական արդարադատության անձնակազմի հատուկ ուսուցումը բավարար չեն: Դա նշանակում է, որ իրավապահ մարմինները և տուժողների հետ աշխատող այլ մասնագետները չունեն առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքերին արձագանքելու համար համապատասխան հմտություններ և գիտելիք: Ինչպես նշվում է GREVIO-ի առաջին Ընդհանուր հանձնարարականում, իրազեկվածության և ուսուցման բացակայությունը կարող է հանգեցնել տուժողների մեղադրման և գործերի կարճման (GREVIO, 2021թ.):

Դ. Սահմանափակ իրավական պատասխանները

Թեև շատ երկրներ ներդրել են առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող չարաշահումների որոշ տեսակներ քրեականացնելու համար նոր օրենքներ, շատ դրույթներ ունեն սահմանափակումներ, ինչպես գործածության շրջանակի, այնպես էլ կիրարկման առումով: Դա հաճախ պայմանավորված է այն օրենքներով, որոնք ընդունվում են հատուկ արշավների կամ աղմկահարույց ողբերգությունների պարագայում, այլ ոչ թե համապարփակ և ամբողջական արձագանք են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերին: Օրինակ՝ CEDAW-ի 2021 թվականին Ինդոնեզիա կատարած այցի վերաբերյալ զեկույցում նշվում է, որ պատկերների վրա հիմնված սեռական բռնությունից տուժողները կարող են քրեական հետապնդման ենթարկվել էլեկտրոնային տեղեկատվության, գործարքների հետ կապված և պոռնոգրաֆիայի մասին օրենքների համաձայն, ինչը նվազեցնում է տուժողների ոստիկանությանը դիմելու հավանականությունը:

MESECVI-ը նշում է, որ որոշ երկրների օրենսդրությունը ապացուցման բեռը դնում է տուժողի վրա, որը պարտավոր է փորձագիտական զեկույցների միջոցով ապացուցել, որ տուժել է՝ դարձյալ խոչընդոտելով տուժողի կողմից հաղորդում ներկայացնելուն և հաջող քրեական հետապնդմանը (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022թ.): ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշել է, որ նույնիսկ այն դեպքում, երբ օրենքները հատուկ քրեականացնում են առանց անձի համաձայնության նրա սեռական բնույթի պատկերների տարածումը, բացեր, այնուամենայնիվ, առկա են: Օրինակ, մի շարք քրեական օրենքներ պահանջում են տուժողին վնաս պատճառելու կամ հուզական անհանգստություն պատճառելու մտադրության ապացույցները, որն ապացուցելը կարող է խնդրահարույց լինել, դժվարացնելով մեղադրանքի առաջադրումը: Ավելին, ներկայումս գործող շատ օրենքներ չեն քրեականացնում սեռական բնույթի պատկերներ կամ տեսանյութեր հրապարակելու սպառնալիքները (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b):

Ե. Թվային բռնության ենթարկված կանանց համար մասնագիտական աջակցության ծառայությունների սակավությունը

Թեև ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը առաջարկել է պետություններին ծառայություններ մատուցել

առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող գենդերային բռնության տուժողներին, այդ թվում՝ մասնագիտական օգնության թեժ գծեր գործարկել, նման աջակցության օրինակները քիչ են (Մարդու իրավունքների խորհուրդ, 2018b): Թեև EDVAW հարթակի մեխանիզմները ընդունում են բռնության և դաժան վերաբերմունքի ենթարկված կանանց մասնագիտացված աջակցության անհրաժեշտությունը (GREVIO, 2021թ.) և նման օգնություն տրամադրող թեժ գծերը, ապաստարանները, խորհրդատվական և իրավական աջակցության ծառայությունները կարող են օգնել առցանց բռնության ենթարկված կանանց, նման մասնագիտական աջակցության կարիք կա նաև թվային բռնությանը ենթարկված կանանց և աղջիկների համար: Օրինակ, ուղղակի աջակցության կարիք կա բովանդակությունը հեռացնելու հարցում, օրինակ՝ առանց տուժողի համաձայնության տեղադրված սեռական բնույթի պատկերների, ինչպես նաև առցանց հարձակումների, տրոլինգի, դոքսինգի և հաքինգի դեմ պայքարելու: Տուժողների համար առանցքային կարևորություն ունի նաև կանանց նկատմամբ բռնությանը օժանդակող տեխնոլոգիաների՝ հետամտող և լրտեսող հավելվածների հետ կապված հատուկ աջակցությունը: Թեև GREVIO-ն ընդլայնում է թվային բռնության ենթարկված կանանց աջակցության և պաշտպանության վերաբերյալ իր գնահատումները, մինչ օրս այն ականատես է եղել շատ քիչ հատուկ աջակցության ծառայությունների, որոնք համակողմանիորեն անդրադառնում են այդ բարդ հիմնախնդիրներին (GREVIO, 2021թ.):

VI. Հետագա քայլեր. EDVAW հարթակի շրջանակներում փոխգործակցության ամրապնդումը կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքելիս

EDVAW հարթակի կանանց իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները վճռորոշ դեր են խաղում կանանց նկատմամբ թվային բռնության հանդեպ պետությունների արձագանքների մոնիթորինգում, ինչպես նաև խթանում են այս ոլորտում բազմակողմ երկխոսությունը: Այս բաժինը նախանշում է Հարթակի համագործակցության հետագա ամրապնդման և կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքման հարցում փոխգործակցության հնարավորությունները:

Ա. Կանանց նկատմամբ թվային բռնության և կանանց հասարակական և քաղաքական մասնակցության միջև փոխկապակցվածության ճանաչումը

Համացանցում շարունակվող և տեխնոլոգիապես օժանդակվող հետապնդումների և բռնության հետևանքով բազմաթիվ կանայք սահմանափակում են իրենց առցանց մասնակցությունը և հեռանում են առցանց քաղաքացիական ներգրավումից, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց մասնագիտական, սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքի վրա: Հատկապես տուժել են կին քաղաքական գործիչները, լրագրողները և իրավապաշտպանները: Այնուամենայնիվ, կանանց նկատմամբ թվային բռնությանն անդրադառնալու կոչերը հաճախ հանդիպում են հակազդման այն հիմքով, որ դրանք սահմանափակում են խոսքի ազատությունը (ONU Mujeres and OEA/CIM/MESECVI, 2022թ.): Հասարակական և քաղաքական բանավեճը հաճախ բնութագրվում է որպես խոսքի ազատության և կանոնակարգման միջև հակասություն:

Այս համատեքստում հատկապես կարևոր է մարդու իրավունքների միջազգային զեկուցողների 2022թ. Խոսքի ազատության և գենդերային արդարության մասին համատեղ հայտարարությունը (Կարծիքի և խոսքի ազատության մասին ՄԱԿ-ի հատուկ զեկուցող, 2022թ.): Այն նշում է, որ «առցանց գենդերային բռնությունը, գենդերային ատելության խոսքը և ապատեղեկատվությունը» «տարածվում են՝ նպատակ ունենալով վախեցնել և լռեցնել կանանց»: Այն պարզաբանում է, որ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունն առանձնահատուկ նշանակություն ունի կանանց արտահայտվելու ազատության տեսանկյունից, քանի որ այն ներառում է ատելության խոսքը, ինչպես նաև թվային տեխնոլոգիաներով օժանդակվող վարքագիծը: Այն նաև սահմանում է մի շարք միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն պետությունների, սոցիալական մեդիա հարթակների և համացանցային միջնորդների կողմից՝ նվազեցնելու և կանխելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը, որը սահմանափակում է կանանց խոսքի ազատությունը:

EDVAW հարթակի անդամները մտահոգված են բռնության և չարաշահումների անբարենպաստ ազդեցությամբ կանանց մասնակցության վրա առցանց և անցանց տիրույթներում, ինչպես նաև առանց սեռական հետապնդումներից, հետամտումներից, սպառնալիքներից և բռնության այլ ձևերից վախենալու նրանց ինքնարտահայտման հնարավորություններով: Այսպիսով, նրանք առանցքային դեր ունեն մոնիթորինգի միջոցով բացահայտելու կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքելու միջոցառումների և կանանց առցանց խոսքի ազատությունը ամրապնդելու անհրաժեշտության միջև կապը՝ միաժամանակ ապահովելով,

որ գործող միջոցները թույլ տան պատասխանատվության ենթարկել մեղավորներին իրենց արարքների համար:

Բ. Համացանցում կանանց իրավունքների դեմ ուղղված խոսքի տարածմանն արձագանքումը

Հնարավոր դարձնելով կանանց նկատմամբ բռնության տարածմանը՝ ՏՀՏ-ները կարող են նաև նպաստել, ամրապնդել և պահպանել կոլեկտիվ բռնության մթնոլորտը: Հետևաբար, կոլեկտիվ կնատյացության և կանանց իրավունքների դեմ ուղղված շարժումների աճող սպառնալիքը պետք է ճանաչվի բոլոր մակարդակներում՝ որպես լուրջ սպառնալիք կանանց մարդու իրավունքներին՝ կոլեկտիվ և անհատական: Առցանց համայնքների անդրսահմանային բնույթից ելնելով անհրաժեշտ են գործողություններ ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակով: Կարևոր է մշակել ռազմավարություն, որը կանդրադառնա կանանց վերաբերյալ բացասական կարծրատիպերի տարածմանը և կանանց իրավունքների դեմ ուղղված առցանց խոսքին, որն օրինականացնում և պահպանում է կանանց նկատմամբ թվային բռնությունը, և այդ հարցում կարևորվում են EDVAW հարթակի անդամների կողմից կուտակված ընդհանուր գիտելիքն ու պատկերացումները:

Գ. Ընտանեկան բռնության և դաժան վերաբերմունքի թվային հարթության խորքային ուսումնասիրությունը

Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները, որոնք ներառում են EDVAW հարթակը, ընդունում են, որ ընտանեկան բռնությունը սրընթաց տարածվում է, ընդ որում Covid-19 համաճարակից հետո այդ ցուցանիշներն ավելի են աճել: Կանանց նկատմամբ բռնության այս ձևի վերաբերյալ յուրաքանչյուր մեխանիզմի կողմից կատարվել է մանրամասն վերլուծություն, բազմաթիվ կոնկրետ առաջարկություններով և լավ փորձի օրինակներով: Սակայն ընտանեկան բռնության խորացող բնույթը հասկանալու և այն կանխելու ու նվազեցնելու ուղղությամբ արդյունավետ գործողություններ ձեռնարկելու համար անհրաժեշտ է թվային հարթության ավելի լայն ճանաչում: Տեխնոլոգիան շատ կանանց ընտանեկան բռնության փորձի մասն է, ընդ որում առցանց բռնությունը հաճախ հանգեցնում է անցանց բռնության և հակառակը: Վերահսկման ավելի դյուրին միջոցներ առաջարկող տեխնոլոգիաների շնորհիվ, այն չունի ժամանակի կամ տարածության սահմաններ, և ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ իրավախախտներն ամենուր են:

Հաշվի առնելով իրենց համապատասխան մանդատները՝ EDVAW հարթակի անդամները կարևոր դեր են խաղում ներպետական մակարդակով բացթողումների և մարտահրավերների հետագա բացահայտման գործում՝ արձագանքելով ընտանեկան բռնության թվային հարթությանը: Ընտանեկան բռնության թվային հարթության ներառումը ցանկացած երկրի մոնիթորինգի պրակտիկայում կօգնի բացահայտել խնդրի իրական ծավալները և ներկայացնել լավ փորձի օրինակներ:

Դ. Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի կարևորությունը

Փոխհամաձայնեցված գործելաոճն առանցքային դեր է խաղում EDVAW հարթակի անդամ կանանց իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային մեխանիզմ-

ներից յուրաքանչյուրի աշխատանքի բոլոր ասպեկտներում կանանց նկատմամբ թվային բռնության բաղադրիչի ինտեգրման տեսանկյունից: Արդեն իսկ գոյություն ունեն լավագույն փորձի օրինակներ, ներառյալ թեմատիկ զեկույցներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի աշխատանքային խմբի կողմից, որոնք կենտրոնանում են երիտասարդ ակտիվիստ կանանց և աղջիկների նկատմամբ առցանց բռնության վրա (Մարդու իրավունքների խորհուրդ, 2022թ.): Կան նաև որոշ երկրների գնահատման զեկույցների օրինակներ, որտեղ թվային հարթության որոշ կողմերն ինտեգրված են ընդհանուր գնահատման մեջ: Դա ցույց է տալիս, որ EDVAW հարթակի անդամները կարևոր դերակատարում ունեն կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքման նպատակով ավելի համակարգված մոնիթորինգի հարցում:

Ե. Մարդու իրավունքների այլ ոլորտների և մեխանիզմների, մասնավորապես՝ կիբերհանցագործության և բիզնեսի ոլորտում, մարդու իրավունքների միջև փոխգործակցության հնարավորությունները

Կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարը և կանանց մարդու իրավունքների պաշտպանությունը գտնվում են մրցակցող իրավունքների և ազատությունների կիզակետում, ներառյալ ավելի լայն տնտեսական, ֆինանսական և բիզնես շահերը: Օրինակ, անհրաժեշտ է վերանայել անձնական տվյալների անձեռնմխելիության և պաշտպանության իրավունքները, որպեսզի հնարավոր լինի բացահայտել կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերը, ինչպես նաև առաջարկել փոխհատուցման հնարավորություններ: Հետևաբար, կարևոր է շարունակել երկխոսությունը մարդու իրավունքների այլ մեխանիզմների և միջազգային մարմինների հետ, այդ թվում՝ ՄԱԿ-ի անձնական տվյալների անձեռնմխելիության իրավունքի գծով հատուկ զեկուցողի և Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների մասին կոնվենցիան մշտադիտարկող Կիբերհանցագործությունների դեմ Կոնվենցիայի կոմիտեի:

Քանի որ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքերի մեծ մասը կատարվում է համացանցի և սոցիալական մեդիա հարթակների միջոցով, համապատասխան միջազգային մարմինների, այդ թվում՝ Բիզնեսի և մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի, Մարդու իրավունքների, անդրազգային կորպորացիաների և այլ բիզնես ձեռնարկությունների հարցերով ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցչի, ՄԱԿ-ի Համացանցային կառավարման ֆորումի և Տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական իրավունքների հարցերով IACHR-ի հատուկ զեկուցողի ավելի մեծ ներգրավվածությունը կնպաստի թվային ոլորտում կանանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը:

Այս առումով, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը և MESECVI-ն բացահայտորեն հղվում են բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի ուղեցույց սկզբունքներին և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ մարդու իրավունքների այն մեխանիզմների և միջազգային դերակատարների միջև երկխոսություն հաստատելու անհրաժեշտությանը, որոնք վերաբերում են բիզնեսի ոլորտում մարդու իրավունքներին (ONU Mujeres և OEA/CIM/MESECVI, 2022; Մարդու իրավունքների խորհուրդ, 2020b): Իր հերթին, ՄԱԿ-ի Բիզնեսի և մարդու իրավունքների աշխատանքային խումբը հստակեցրել է, որ «բիզնես ձեռնարկությունները պարտավոր են թույլ չտալ կանանց մարդու իրավունքների ոտնահարում և վերացնել մարդու իրավունքների վրա դրանց բացասական ազդեցությունը: [... Հետևաբար,] ձեռնարկությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, որ կանայք կիբերտարածքում չենթարկվեն հետապնդում-

ների, բուլինգի կամ ահաբեկման, և որ նրանք կարողանան օգտագործել սոցիալական մեդիա հարթակները՝ առանց խտրականության կամ բռնության սպառնալիքի ենթարկվելու վախի»: Այս մոտեցումը կարելի է շարունակական ձևով զարգացնել:

Զ. Համագործակցություն մասնավոր հատվածի հետ՝ առցանց վնասները կանխելու և մեղմելու համար

EDVAW հարթակի կանանց իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները ճանաչում են մասնավոր հատվածի հիմնարար դերը կանանց նկատմամբ թվային բռնությունը կանխելու և մեղմելու գործում: Անհրաժեշտության դեպքում կարելի է խրախուսել պետություններին ավելի ակտիվ աշխատել համացանցային հարթակների հետ՝ կենտրոնանալով հարթակների այն համակարգերի և գործընթացների վրա, որոնք հեշտացնում և ընդլայնում են կանանց նկատմամբ թվային բռնության հնարավորությունները: Իրավական և քաղաքական բարեփոխումները պետք է ուղղված լինեն ՏՀՏ ոլորտին, այդ թվում՝ համացանցային հարթակներին, ապահովելու անվտանգ առցանց միջավայր կանանց համար, որտեղ նրանց իրավունքները հարգվում և խրախուսվում են: Դա կարող է ներառել պարտադիր պահանջներ՝ կապված ռիսկերի գնահատման և վնասի նվազեցման միջոցառումների հետ՝ կենտրոնանալով կանանց և աղջիկների վրա, ինչպես նաև համակարգերի և գործընթացների դիտարկում, ինչպիսիք են ալգորիթմները, որոնք կարող են ուժգնացնել և շարունակել առցանց բռնությունն ու դաժան վերաբերմունքը:

Այն կարող է ներառել նաև թափանցիկ և հեշտ հասանելի հաշվետվության մեխանիզմներ՝ արդյունավետ արձագանքներով և սանկցիաներով, կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության թեման ուսումնասիրող անհատ մոդերատորների արդյունավետ ներգրավմամբ, վնասակար առցանց նյութերի արագ հեռացմամբ և քաղաքականության իրականացման ուղղությամբ անկախ աուդիտի և համապարփակ թափանցիկ տարեկան հաշվետվությունների պարտադիր տրամադրմամբ:

Է. Թվային բռնության ինտերսեկցիոնալ բնույթի և մասնագիտական աջակցության անհրաժեշտության կարևորումը

EDVAW հարթակի բոլոր անդամները գիտակցում են կանանց նկատմամբ բռնության ինտերսեկցիոնալ բնույթը. գենդերային բռնությունը կարող է տարբեր ձևով և ուժգնությամբ ազդել տարբեր սոցիալական բնութագրիչներ ունեցող կանանց վրա: Մինչդեռ կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը ավելի է տարածված և ունի ավելի մեծ բացասական ազդեցություն, կախված տուժողի տարիքից, տուժողի և իրավախախտի փոխհարաբերություններից, հաշմանդամություն ունենալուց: Անհրաժեշտ են ավելի շատ դիզագրեգացված տվյալներ խոցելի իրավիճակներում հայտնված կանանց փորձառությունն ավելի լավ հասկանալու համար:

Կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքելու հիմքում պետք է լինի բազմաթիվ կանանց նկատմամբ խտրականության ինտերսեկցիոնալ բնութագրիչների վերլուծությունը: Այն կարող է նախատեսել մասնագիտական աջակցության համար կայուն ռեսուրսներ այն «կանանց կողմից և այն կանանց համար», որոնք բազմաթիվ ինտերսեկցիոնալ հիմքերով բռնության են ենթարկվում, ներառյալ հաշմանդամությունը, սոցիալ-տնտեսական ծագումը, սեռական կողմնորոշումը, ազգային/էթնիկ փոքրամասնությանը պատկանելը, միգրանտի

կարգավիճակը և այլն: Ինտերսեկցիոնալ խտրականության բախվող կանայք պետք է մասնակցեն կանանց նկատմամբ բռնության թվային հարթության վերաբերյալ քաղաքացիական երկխոսությանը: Ավելի մեծ ուշադրությունը ներպետական այնպիսի արձագանքին, որը հաշվի է առնում կանանց առանձնահատուկ փորձը և կարիքները, կօգնի EDVAW հարթակի անդամներին զարգացնել մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային չափորոշիչների մոնիթորինգում իրենց ինտերսեկցիոնալ մոտեցումը:

Ը. Կանանց նկատմամբ թվային բռնության նոր մարտահրավերների կանխատեսումը

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը դինամիկ երևույթ է, քանի որ թվային հարթակներն ու այլ տեխնոլոգիաները գտնվում են զարգացման շարունակական գործընթացում: Տեխնոլոգիաները, ամենայն հավանականությամբ, ավելի կինտեգրվեն մեր կյանքում, հատկապես մետատիեզերքի ստեղծմանը և զարգացմանը զուգահեռ: Մետատիեզերքը ձևավորվող, ընկղմվող թվային միջավայր է, որը կվերափոխի բոլորի կյանքը և կդառնա նոր տեխնիկական շրջադարձ և հասարակության վերափոխում, ինչպես ժամանակին դարձան համացանցը և սմարթֆոնները: Ֆիզիկական և թվային իրողությունները կմիաձուլվեն մետատիեզերքում, որտեղ փոխգործակցում են ավատարները՝ թվային մարդիկ: Կանանց նկատմամբ բռնության դեպքերն արդեն իսկ առկա են և բացահայտում են այս երևույթի մտահոգող, դաժան բնույթը և նոր տեխնոլոգիայի մեջ կանանց մասնակցության մարտահրավերները: Ի պատասխան՝ որոշ մետատիեզերային ընկերություններ ներկայացնում են տեխնիկական փոփոխություններ, սակայն այդ գործողությունները ավելի շուտ ռեակտիվ են, քան պրոակտիվ, քանի որ կանանց անվտանգությունն ու իրավունքներն ի սկզբանե հաշվի չեն առնվում:

EDVAW հարթակի անդամները առանցքային դեր ունեն տեխնոլոգիաների զարգացման համատեքստում առաջին պլան մղելու մարդու իրավունքների համար դրանց հետևանքների շուրջ քննարկումները: Առաջարկելով իրենց գիտելիքն ու փորձը կանանց նկատմամբ թվային բռնության (անհատական և կոլեկտիվ) հսկայական դաշտի վերաբերյալ, նրանք կարող են ապահովել հեռանկարային քաղաքականության մշակումը, որի կենտրոնում կլինեն կանանց իրավունքները, մասնավորապես՝ առանց բռնության ապրելու իրավունքը:

Օգտագործված գրականության ցանկ

Աֆրիկյան հանձնաժողով. (2017թ.), Աֆրիկայում սեռական բռնության և դրա հետևանքների դեմ պայքարի ուղեցույցներ, հասանելի՝ https://www.achpr.org/legalinstruments/detail?id=4:

Աֆրիկյան հանձնաժողով. (2022a), Բանաձև Աֆրիկայում թվային բռնությունից կանանց պաշտպանության մասին: հասանելի՝ https://www.achpr.org/sessions/resolutions?id=558:

Աֆրիկյան հանձնաժողով. (2022b). Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի հայտարարությունը Կանանց միջազգային օրվա կապակցությամբ. http://www.achpr.org/pressrelease/detail?id=624:

Amnesty International. (2017թ.), Համաներումը բացահայտում է կանանց նկատմամբ առցանց բռնության տագնապալի ազդեցությունը, հասանելի՝ https://www.amnesty.org/en/latest/press-release/2017/11/amnesty-reveals-alarming-impact-of-online-abuse-against-women/:

Amnesty International (2018թ.), Կանայք բռնության են ենթարկվում Twitter-ում յուրաքանչյուր 30 վայրկյանը մեկ. Նոր հետազոտություն, հասանելի՝ https://www.amnesty.org.uk/press-releases/women-abused-twitter-every-30-seconds-new-study:

CEDAW (2017թ.), Կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարական, որը փոխարինում է թիվ 19 հանձնարականը:

Եվրոպայի խորհուրդ (2021թ.), Կանանց և աղջիկների պաշտպանությունը բռնությունից թվային դարաշրջանում. Ստամբուլյան կոնվենցիայի և Կիբերհանցագործության մասին Բուդապեշտի կոնվենցիայի կարևորությունը կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեմ պայքարում, հասանելի՝ https://edoc.coe.int/fr/violence-l-gard-des-femmes/10686-protecting-women-and-girls-from-violence-in-the-digital-age.html:

Եվրոպայի խորհուրդ (2020թ.), *Կանանց և աղջիկների նկատմամբ կիբերբռնության հաղթահարումը,* հասանելի՝ https://www.coe.int/en/web/commissioner/-/stop-cyberviolence-against-women-and-girls:

Էկոնոմիստի հետախուզության ստորաբաժանում (2021թ.), Կանանց նկատմամբ առցանց բռնության տարածվածության գնահատում, հասանելի՝ https://onlineviolencewomen.eiu.com:

EDVAW հարթակ (2022թ.), *Հայտարարություն. Կանանց իրավունքների փորձագետները կոչ են անում ավելի հստակ ճանաչել կանանց նկատմամբ թվային բռնությունը՝ մարդու իրավունքների իրականացման ջանքերում*, հասանելի՝ https://rm.coe.int/statement-edvaw-platform-17-june-2022/1680a6ef8b:

EIGE. (2021թ.), *Գենդերային բռնությունից բխող ծախսերը Եվրոպական միությունում*, հասանելի՝ https://eige.europa.eu/news/gender-basedviolence- costs-eu-eu366-billion-year:

GREVIO. (2021թ.), *Կանանց նկատմամբ թվային բռնության մասին թիվ 1 ընդհանուր հանձնարարական,* հասանելի՝: https://rm.coe.int/grevio-rec-no-on-digital-violence-against-women/1680a49147:

Մարդու իրավունքների խորհուրդ, (1994թ.), Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մեխանիզմներում կանանց իրավունքների ինտեգրման և կանանց նկատմամբ բռնության վերացման հարցը:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2016թ.), *Համացանցում մարդու իրավունքների ամրապնդման, պաշտպանության և օգտագործման վերաբերյալ բանաձև*: A/HRC/RES/32/13:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2018թ.), *Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույցը, դրա պատճառներն ու հետևանքները կանանց և աղջիկների նկատմամբ առցանց բռնության տեսանկյունից՝ մարդու իրավունքների համատեքստում,* A/HRC/38/47:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2019a), *Բիզնեսի և մարդու իրավունքների առաջնորդող սկզբունքների գենդերային հարթությունները: Զեկույց մարդու իրավունքների և անդրազգային կորպորացիաների և այլ բիզնես ձեռնարկությունների հիմնախնդրի վերաբերյալ*:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2019b), *Կանանց նկատմամբ բռնությունը, դրա պատճառներն ու հետևանքները: Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց.* A/HRC/41/42:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2020a), *Կին լրագրողների նկատմամբ բռնության դեմ պայքար. Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույց,* A/HRC/44/52:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2020b), *Կանանց մարդու իրավունքները փոփոխվող աշխատանքի աշխարհում: Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության վերաբերյալ աշխատանքային խմբի զեկույց* A/HRC/44/51:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2021թ.), Մարդու իրավունքների ամրապնդման և պաշտպանության հետ կապված նոր և զարգացող թվային տեխնոլոգիաների հնարավոր ազդեցությունները, հնարավորությունները և մարտահրավերները A/HRC/47/52:

Մարդու իրավունքների խորհուրդ, (2022թ.), *Աղջիկների և երիտասարդ կանանց ակտիվիզմ: Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության վերաբերյալ աշխատանքային խմբի զեկույց* A/HRC/50/25:

IACHR. (2018թ.), Կին լրագրողներ և խոսքի ազատություն: Խտրականություն և գենդերային հիմքով բռնություն կին լրագրողների նկատմամբ իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելու պատճառով:

IACHR. (2018թ.), *Մամուլի հաղորդագրություն թիվ 250/18. Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր,* հասանելի՝ https://www.oas.org/es/cidh/prensa/comunicados/2018/250.asp:

IACHR. (2019թ.), *Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և խտրականության դեմ պայքարի լավագույն փորձը և մարտահրավերները Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում:*

MESECVI. (2017թ.), *El Salvador: Informe País Tercera Rotonda*. հասանելի՝: https://belemdopara.org/ monitoreo-por-pais/:

MESECVI. (2018թ.), *IACHR-ի Փորձագետների կոմիտեն և հատուկ զեկուցողն իրենց մտահոգությունն են հայտնում Պարագվայում լրագրող Նոելիա Դիազ Էսկիվելի դեմ սպառնալիքների կապակցությամբ,* հասանելի՝ https://belemdopara.org:

MESECVI. (2020a), *Ecuador: Informe de Implementación de las Recomendaciones del Cevi Tercera Rotonda – Fase de Seguimento*. հասանելի՝ https://belemdopara.org/monitoreo-por-pais/:

MESECVI. (2020b), *Honduras: Informe de Implementación de las Recomendaciones del CEVI Tercera Rotonda – Fase de Seguimento*. հասանելի՝ https://belemdopara.org/monitoreo-por-pais/:

MESECVI. (2020c), *Փորձագետների կոմիտեն իր մտահոգությունն է հայտնում Մեքսիկայում սենատոր Մարթա Լուսիա Միխերի նկատմամբ բռնության գործողությունների կապակցությամբ,* հասանելի՝ https://belemdopara.org:

MESECVI. (2021թ.), *Փորձագետների կոմիտեն անհանգստություն է հայտնում Պարագվայի ազգային պատգամավոր Կատյա Գոնսալեսի հետապնդումների վերաբերյալ:* հասանելի՝ https://belemdopara.org:

OAS/CICTE և OAS/CIM/MESECVI. (2021թ.), *Կանանց կիբերանվտանգությունը COVID-19 համավարակի ժամանակ. փորձ, ռիսկեր և ինքնասպասարկման ռազմավարություններ նոր թվային իրողության մեջ*:

OAS/CICTE և OAS/CIM/MESECVI. (2022թ.), *Առցանց գենդերային բռնություն կանանց և աղջիկների նկատմամբ: Հիմնական հասկացությունների, թվային անվտանգության գործիքների և արձագանքման ռազմավարությունների ուղեցույց:*

ONU Mujeres և OEA/CIM/MESECVI. (2022թ.), *Ciberviolencia y Ciberacoso contra las Muyeres y Niñas en el Marco de la Convención Belém do Paradó*. հասանելի՝ https://belemdopara.org/ publicaciones:

Plan International. (2020թ.), *Ազա՞տ ես լինել համացանցում: Աղջիկների և երիտասարդ կանանց առցանց բռնությունների փորձը:* հասանելի՝ https://plan-international.org/ uploads/2022/02/sotwgr2020-commsreport-en-2.pdf:

Pollicy. (2021թ.), *Այլընտրանքային իրողություններ, այլընտրանքային համացանց: Ֆեմինիստական հետազոտություն ֆեմինիստական ինտերնետի համար: Աֆրիկայում առցանց գենդերային բռնության ընկալումը.* հասանելի՝ https://medium.com/ pollicy/alternate-realities-alternate-internets-feminist-research-for-a-feminist-internet-4fd979380fd3:

Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող, (2022թ.), *Միջխորհրդարանական գործունեության մասին հաշվետվություն Մարդու և մարդկանց իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի 71-րդ հերթական նստաշրջանի ընթացքում:* հասանելի՝ https://www.achpr.org:

ՄԱԿ. (2017թ.), *ՄԱԿ-ի փորձագետները կոչ են անում պետություններին և ընկերություններին արձագանքել գենդերային հիմքով առցանց բռնությանը, բայց և զգուշացանալ գրաքննությունից,* հասանելի՝ https://www.ohchr.org/en/press-releases/2017/03/un-experts-urge-states-and-companies-address-online-gender-based-abuse-warn:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման լայնաշերտ հանձնաժողով, (2015թ.), *Կիբերբռնություն կանանց և աղջիկների նկատմամբ. Համաշխարհային զարթուցիչ,* հասանելի՝ https://www.broadbandcommission.org:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, (2006թ.), *Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ խորքային ուսումնասիրություն. Գլխավոր քարտուղարի զեկույց,* հասանելի՝ A/61/122/Add.1:

Կարծիքի և արտահայտվելու ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող և այլք (2022թ.), Խոսքի ազատության և գենդերային արդարության մասին համատեղ հայտարարություն, հասանելի՝ https://www.osce.org:

ՄԱԿ-կանայք (2020թ.). *Առցանց և ՏՀՏ-ով օժանդակվող բռնություն կանանց և աղջիկների նկատմամբ COVID-19-ի ժամանակ,* հասանելի՝ https://www.unwomen.org:

ՄԱԿ-կանայք (2021a). *Covid-19 և բռնություն կանանց և աղջիկների նկատմամբ. Ստվերային համավարակի հաղթահարում,* հասանելի՝ https://www.unwomen.org:

ՄԱԿ-կանայք (2021b). *Կանանց նկատմամբ բռնությունը առցանց տարածքում. Ի՞նչ են հուշում արաբական աշխարհում մի քանի երկրների ուսումնասիրությունները,* հասանելի՝ https://arabstates.unwomen.org:

ՄԱԿ-ի աշխատանքային խումբ (2019թ.). *Դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողի մանդատները, Անձի անձեռնմխելիության իրավունքի հատուկ զեկուցող, Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված բռնությունից և խտրականությունից պաշտպանության անկախ փորձագետ, Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով հատուկ զեկուցող, Օրենսդրության մեջ և գործնականում կանանց նկատմամբ խտրականության խնդրին առնչվող աշխատանքային խումբը*:

ՄԱԿ-ի աշխատանքային խումբ (2022թ.). *Իրավապաշտպանների իրավիճակի գծով հատուկ զեկուցողի մանդատները: Փոքրամասնությունների հարցերով հատուկ զեկուցող, Կրոնի կամ հավատքի ազատության հարցերով հատուկ զեկուցող, Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով հատուկ զեկուցող և Կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով աշխատանքային խումբ,* հասանելի՝ spcommreports.ohchr.org/TMResultsBase/DownLoadPublicC:

ՅՈՒՆԵՍԿՕ (2020թ.), Կին լրագրողների նկատմամբ առցանց բռնություն. դեպքերի և ազդեցությունների գլոբալ պատկեր. հասանելի՝ https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000375136:

ՅՈՒՆԻՍԵՖ. (2021թ.). Ինչ գիտենք աղջիկների գենդերային թվային անհավասարության մասին. գրականության ակնարկ, հասանելի՝ https://www.unicef.org/eap/reports/innovation-and-technology-gender-equality-0:

Կանանց նկատմամբ խտրականության և բռնության դեմ պայքարի անկախ փորձագիտական մեխանիզմների հարթակում (այսուհետ՝ EDVAW հարթակ) ներառված են միջազգային և տարածաշրջանային մակարդակների կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի և կանանց իրավունքների վերաբերյալ յոթ անկախ փորձագիտական մեխանիզմները: Հարթակում ներկայացված են Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի փորձագետների խումբը (GREVIO), Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) հատուկ զեկուցողը, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW), Իրավական և պրակտիկ ոլորտներում կանանց նկատմամբ խտրականության հարցերով զբաղվող ՄԱԿ-ի աշխատանքային խումբը, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի կանանց իրավունքների զեկուցողը, Աֆրիկայում կանանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը և Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պատժի և վերացման մասին միջամերիկյան կոնվենցիայի իրականացման հսկիչ մեխանիզմի փորձագետների կոմիտեն՝ Belém do Pará Convention (MESECVI):

Այս ձեռնարկում փորձ է արվել համեմատելու կանանց իրավունքների միջազգային և տարածաշրջանային մեխանիզմների կողմից մշակած կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի մոտեցումները, որոնք միասին կազմում են EDVAW հարթակը: Ձեռնարկի նպատակն է դիտարկել այդ մեխանիզմների զարգացումը, ինչպես նաև հիմնախնդրի վերաբերյալ եզրույթների, հայեցակարգերի և մոտեցումների էվոլյուցիան: Այն ներկայացնում է նշված մեխանիզմների կողմից կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ ձևավորված ընկալումների և մոտեցումների ընդհանրություններն ու տարբերությունները՝ իրենց մանդատի շրջանակում՝ Հարթակի տարբեր մասնակիցների միջև երկխոսությանը նպաստելու համար: Այն բացահայտում է կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի արդյունավետ պրակտիկաներն ու մարտահրավերները և առաջարկում է կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքման նպատակով EDVAW հարթակի կողմից ձեռնարկվելիք հետագա գործողությունները:

UNITED NATIONS HUMAN RIGHTS SPECIAL PROCEDURES
SPECIAL RAPPORTEURS, INDEPENDENT EXPERTS & WORKING GROUPS

UNITED NATIONS HUMAN RIGHTS TREATY BODIES

OAS | MESECVI

IACHR Inter-American Commission on Human Rights

PREMS 096523

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE